№ 10 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 17

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 17 № 10

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ.

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհուրդը

յայտարարում է, որ նաւթարդիւնաբերողների XX և XXIII հերթական համագումարներում վճռված է 1905 թ. փետրվարի 6—9 նաւթահանքերում և գործարաններում սպանվածների հարազատներին ու ժառանգներին տալ նպաստ համաձայն

Ստորեւ տպագրված ցուցակի.

Նպաստ կարելի է ստանալ ներկայ թւի յունվարի մէկից մինչև մայիսի 15-ը

Նաւթարդիւնաբերողների խորհրդի գրասենեակում

(Баку, Меркурьевская, домъ Туманянца).

Նպաստ ստանալու համար խորհուրդը խնդրում է ներկայացնել նպաստ ստացողի անձը և իրաւունքը վաւերացնող դոկումենտներ։

Աբրահամեանց Ջհանգիր Ստեփանեան, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Խանարախ գիւղի բնակիչ, 150 ր.

Ադամեանց Սարգիս, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Հերհեր գիւղի բնակիչ, 410 ր.

Այրիեանց Ալէքսանդր, Բագւայ նահանգի Գեօկչայ գաւառի Վանք գիւղի բնակիչ, 50 ր.

Առրիեանց Ասլան Սարգսեան, Թիֆլիս քաղաքի բնակիչ, 600 ր.

Առուստամեանց Շահնազար, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Լուժ գիւղի բնակիչ, 350 ր.

Աւետիսեանց Բախշի, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Հաղորդ գիւղի բնակիչ, 270 ր.

Բաբայեանց Յարութիւն, Բագուի նահանգի Գեօկչայ գաւառի Վանք գիւղի բնակիչ, 150 ր.

Բաբայեանց Սողոմոն, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Ցոր գիւղի բնակիչ, 450 ր.

Բաղդեանց Միրզա, Գանձակի Զանգեզուր գաւառի Տաթև գիւղի բնակիչ 150 ր.

Բարսեղեանց Սարգիս Առաքելեան, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Մեշադիքենդ գիւղի բնակիչ, 260 ր.

Գրիգորեանց Սհակ Պօղոսեան, Գանձակի, նահանգի Զանգեզուր գաւառի Քուրդլիքենդ գիւղի բնակիչ 150 ր.

Գրիգորեանց Սուլէյման, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Բեշիշքենդ գիւղի բնակիչ, 300 ր.

Թարագղալեանց Դաւիթ, Բագուի նահանգի Շամախի քաղաքի բնակիչ, 125 ր.

Լալայեանց Դաւիթ, Երևանեան նահանգի Իգդիր գիւղի բնակիչ, 400 ր.

Խաչեանց Շահբազ, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Լիզին գիւղի բնակիչ, 150 ր.

Ծատուրեանց Բաղդասար, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Խնձիրեակ գիւղի բնակիչ, 300 ր.

Ծատուրեան Գրիգոր, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Ղալադարասի գիւղի բնակիչ, 350 ր.

Ծատուրեանց Մանուչար, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Խնձիրեակ գիւղի բնակիչ, 150 ր.

Ծատուրեան Մինաս, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Բիխ գիւղի բնակիչ, 500 ր.

Կարապետեանց Յարութիւն, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Քուրդլիքենդ գիւղի բնակիչ, 150 ր.

Կիրակոսեանց Մկրտիչ, Ալէքսանդրոպոլ քաղաքի բնակիչ, 400 ր.

Համբարձումեանց Գրիգոր, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Քուրդլիքենդ գիւղի բնակիչ, 150 ր.

Համբարձումեանց Եփրեմ, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Քուրդլիքենդ գիւղի բնակիչ, 150 ր.

Հայրապետեանց Մեհլում, Գանձակի նահանգի Նուխուայ գաւառի Դժալուդ գիւղի բնակիչ, 300 ր.

Ղազարեանց Սարգիս, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Մեշադիքենդ գիւղի բնակիչ, 450 ր.

Ղահրամանեանց Համբարձում, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Դաշբուլաղ գիւղի բնակիչ, 265 ր.

Ղուկասեանց Դաւիթ Ստեփանեան, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Բարդ-գիւլու գիւղի բնակիչ, 405 ր.

Մարտիրոսեանց Աստուածատուր, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Խնձիրեակ գիւղի բնակիչ, 150 ր.։

Միրզաբեգովեանց Արշակ, Գանձակի նահանգի Ջիւանշիր գաւառի Գիւլաթաղ գիւղի բնակիչ, 150 ր.։

Մուսայէլեանց Ալէքսանդր, Գանձակի նահանգի Շուշի քաղաքի բնակիչ, 325 ր.։

Յարութիւնեանց Գրիգոր, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Ցոր գիւղի բնակիչ, 725 ր.։

Յարութիւնեանց Յակոբ, Բագուի նահանգի Գեօկչայ գաւառի Վանք գիւղի բնակիչ, 450 ր.։

Յովհաննէսեանց Յարութիւն, Երևանեան նահանգի Նոր-Բայազէտ գաւառի Օրտակլու գիւղի բնակիչ, 150 ր.։

Յովհաննէսեանց Յովհաննէս, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Բանազուր գիւղի բնակիչ, 295 ր.։

Յովհաննէսեանց Սարգիս, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Մեշադիքենդ գիւղի բնակիչ, 450 ր.։

Ներսեսեան Միրզա և Սիմէօն, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Ցոր գիւղի բնակիչ, 200 ր.։

Շահգալդեանց Մարտիրոս, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Խանածախ գիւղի բնակիչ, 375 ր.։

Պետրոսեանց Գրիգոր, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Մեշադիքենդ գիւղի բնակիչ, 300 ր.։

Ջանվելեանց Բալաբէկ, Գանձակի նահանգի Ղազախ գաւառի Ուզունթալա գիւղի բնակիչ, 125 ր.։

Ջաւադեանց Նիկոլայ, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Ալիղուլիքենդ գիւղի բնակիչ, 350 ր.։

Սարգսեանց Կարապետ, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Ղալադարասի գիւղի բնակիչ, 150 ր.։

Սարգսեանց Սարգիս, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Բանազուր գիւղի բնակիչ, 150 ր.։

Սհակեանց Գրիգոր Սարգսեան, Գանձակի նահանգի Նուխի քաղաքի բնակիչ, 250 ր.։

Ստեփանեանց Մեսրոպ, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Վանք գիւղի բնակիչ, 450 ր.։

Վարդանեանց Իւան, Գանձակի նահանգի Շուշի քաղաքի բնակիչ, 300 ր.։

Տէր-Գրիգորեանց Յովհաննէս, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Գալուր գիւղի բնակիչ, 250 ր.։

Տէր-Յովհաննէսեանց Առաքել, Գանձակի նահանգի Շուշւայ գաւառի Բեշիշքենդ գիւղի բնակիչ, 300 ր.։

Տէր-Պօղոսեանց Տիգրան, Գանձակի նահանգի Ղազախ գաւառի Քարվանսարա գիւղի բնակիչ, 430 ր.։

Փանոսեանց Մկրտիչ, Երևան քաղաքի բնակիչ, 225 ր.։

Օհանեանց Պօղոս, Գանձակի նահանգի Ջէբրայիլ գաւառի Ցոր գիւղի բնակիչ, 400 ր.։

Օրբելեանց Յովհաննէս Սողոմոնեան, Գանձակի նահանգի Զանգեզուր գաւառի Վաղադու գիւղի բնակիչ, 425 ր.։

առ (Հ. 2.) 1—3

Աստղիկ, Յովհաննէս, Նատալիա, սարկաւագ Սարգիս, Վարսենիկ և Շուշանիկ Իփակեանցները, Յակոբ և Կատարինէ Ղարաքէշիշեանցները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինը, իր սիրելի և թանկագին ամուսնու, երկրորդը և երրորդը որդու, չորրորդը, 5-րդը և 6-րդը եղբօր, 7-րդը և 8-րդը փեսայի՝ Զգրաշէն Աւետեաց եկեղեցու՝

Սարկաւագ Ալէքսանդր Իփակեանցի

մահվան մասին, որ տեղի ունեցաւ ամսիս 15-ին։ Ամբիծքը ամսիս 17-ին, չորեքշաբթի, երեկոյեան ժամը 5 և կէսին, իսկ յուղարկաւորութիւնը հանգուցեալի բնակարանից (Преображенская ул. № 15) դէպի Շամքօրեցոց եկեղեցին և դէպի գերեզմանատուն ամսիս 18-ին, հինգշաբթի, առաւօտեան ժամը 10½-ին։ 1—1

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ՆԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԴՆԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶԻՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՖԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. չոր. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Դ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիւանդութ. ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՑԵՑՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք շաբ. 3—4 ժ.։

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.։

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ } հիմիական անալիզ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԻԴՆՕՎՍԿԻ }

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմ. մասսաժ, էլէքտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԴՕՐՕՖԵԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ. Դ. ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 12—1 ժամը։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ., հինգշ. շաբ. —5 ժամը։

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծամանների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 44—144

ԲԺԻՇԿ
Գ. Պապովեան
ՄԱՍՆԱԳԷՏ
քթի, կոկորդի և ականջի
հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի ուրբաթ; երեկ. 5—7 ժ.

Միխայլովսկի պրոսպ., տ. Ֆօրբերի № 11.

(կ. չ.) առ. 17—60

ԲԺԻՇԿ
Տ. Ա. Իսախանեան
ՄԱՍՆԱԳԷՏ
ներքին և վեներական
հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սոլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիգօնովի տանը։

առ. (չուռ.գ.) 28—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համախմբումներ. Վերջին տեղեկութիւններ. Ընտրութիւնները Կովկասում. Ընտրական բարքեր. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Մամուլ. Նամակ Պետերբուրգից. Գանձակի շրջանից. Դպրոցներում. Այլ ժամանակներ, այլ երգեր. Դպրոցի մէջնադէպի առիթով. Հայոց Ազգագրական ընկերութեան հրապարակական նիստը. Թատրոն և երաժշտութիւն. Մեր նիւթականութիւնից. Ընտրութիւնների շուրջը. Թիւրիմացութիւնը ցրելու համար. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակներ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

I

Ներկայ ընտրութիւնները օտարոտի կերպարանք են ստացել։ Կազմվել են բազմաթիւ կուսակցութիւններ, որոնց մէջ կան այնպիսիները, որոնք շատ սակաւաթիւ կուսակիցներ ունեն։ Եթէ այդ կուսակցութիւնները գործելու լինեն առանձին-առանձին, անկարող կը լինեն ընտրել տալ իրանց կուսակցութեան մարդկանց իբրև պատուիրակ և պատգամաւոր։ Բայց և այնպէս նրանք գոյութիւն ունեն և ձգտում են յամառ կերպով պահպանել իրանց գոյութիւնը։

Եւ մենք յաճախ լսում ենք հասարակութեան մէջ տրտունջներ, թէ ինչու են կազմվում նոր համախմբումներ և կուսակցութիւններ։ Տրտունջ յայտնողները առարկում են, թէ ամեն մի նոր համախմբում ջլատում է հասարակական խոշոր հոսանքների ոյժերը և վերջ ի վերջոյ առաջ է գալիս խառնակութիւն և անորոշութիւն հասարակական տիրապետող տրամադրութիւնների արտայայտութեան գործում։

II

Որքան էլ իրաւացի լինի այդ տրտունջը ընդհանուր տեսակէտով, այնուամենայնիւ նոր համախմբումներ կազմելը բացասական մի երեւոյթ չէ։ Նա ժամանակի պահանջն է, բոլորովին բնական և տրամաբանական։

Մարդիկ դեռ չեն ունեցել քաղաքական կեանքի իրականութիւն, չեն կապվել միմեանց հետ քաղաքական աւանդութիւններով և միևնոյն ժամանակ ունեն տարբեր հայեացքներ մի շարք հասարակական-քաղաքական խնդիրների մասին։

Թող իւրաքանչիւր խոշոր հայեացք ունենայ իր արտայայտութիւնը մարդկանց համախմբումների մէջ։ Դա անհրաժեշտութիւն է։

Բայց անկասկած ցանկալի է, որ միմեանց մօտ և գաղափարակից կուսակցութիւններ միանային ընդհանուր գործերում, օրինակ, ընտրութիւնների ժամանակ, և հանդէս գային այնպիսի ստուար ձայներով, որ կարողանային ազդել հասարակական գործերի վրա։

III

Ժամանակի ընթացքում գործնական կեանքը կը ստեղծէ որոշ խմբեր միմեանց հետ, և մի քանի համախմբումներ կը միանան, կը ձուլվեն և կը հալվեն ընդհանուր ծրագրի մէջ։

Ներկայումս, օրինակ, մայրաքաղաքներում շատ մօտ են միմեանց ժողովրդական ազատութեան և դեմոկրատական րեֆորմների կուսակցութիւնները։ Վերջինս միշտ իրան զգացել է համախոհ առաջինների հետ, և նոյնիսկ կայ մամուլի մի օրգան, «Страна» լրագիրը, որը արտայայտիչ է երկու կուսակցութիւնների և մասամբ սօցիալիստների մի խմբի։

Պարլամենտական կեանքը ապագայում նոր դաշնակցութիւններ կը կազմէ և վերջ ի վերջոյ իբրև գլխաւոր գործողներ կը հանդիսանան մի քանի խոշոր կուսակցութիւններ, իսկ միւսները կը պտտեն նրանց շուրջը, ուժեղացնելով և թուլացնելով նրանց՝ նայած հանգամանքներին։

IV

Միւս կողմից պէտք է նկատել հետեւեալը. մի որեւէ համախմբում, որ ներկայումս դեռ մեծ ոյժ չունի, կարող է ապագայում զարգանալ, ոյժ ստանալ և գրաւել ընդարձակ շրջաններ։ Նա այսօր փոքր է և սակաւ կուսակիցներ ունի, բայց նա ունի ծրագիր, որին վիճակված է աստիճանաբար նուաճումներ կատարել կեանքի մէջ։

Եւ անկասկած՝ այդպիսի մի համախմբում եթէ չէ կարող այսօր դաշն կապել եղած կուսակցութիւնների հետ, թող գործէ ազատ, թող ընտրական պայքարը առաջ մղէ առանձին։ Նրա այդ գործունէութիւնը կունենայ պրօպագանդայի, իր ծրագրի տարածման նպաստող նշանակութիւն։

Մենք շատ և շատ ցանկանում ենք, որ իւրաքանչիւր կուսակցութիւն որոշ ազդեցութիւն ունենայ ընտրութեան արդիւնքների վրա. բայց գործնական այդ նպատակը չը պէտք է դրդէ մարդկանց անպատեհ յարելու մի որևէ ուժեղ կուսակցութեան, եթէ այդ կուսակցութիւնը ինքն ըստ ինքեան չէ համապատասխանում ընդհանուր առմամբ ընտրողների ցանկութիւններին։

Մենք դեռ կը խօսենք։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 15 յունվարի

Նպաստամատոյց յանձնաժողովի կողմից եկած պատգամաւորութիւնը, վերջացնելով իր գործերը, ճանապարհ ընկաւ դէպի Մոսկվա։

Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը որոշեց իր տարեկան բիւջէտի մնացորդը, 25,000 րուբլի, յատկացնել աղէտեալների օգնութեան գործին։

Նպաստամատոյցի գործունէութեան, յոյս կայ, որ օգնեն նաև կանանց յանձնաժողովը և մի քանի մասնաւոր անձեր։

Պատգամաւորութիւնը Մոսկվայից կուղևորվի դէպի Բեսարաբիա, Կրիմ և գուցէ Աստրախան։

—

Թիֆլիսի պարսկական հիւպատոսը երէկ, յունվար ի 16 ին, ցերեկվայ ժամի 1½-ին այցելեց Թիֆլիսի առաջնորդին և մնաց առաջնորդարանում մօտ մի ժամ։

—

Խմբագրութիւնս ստացել է մի գրութիւն, որով պարսից տեղական գեներալ-հիւպատոսարանը խնդրում է տպել, որ գեներալ-հիւպատոս Մօֆախամէս-Սուլթանը սադրազամից և արտաքին գործերի մինիստրից ստացել է հետեւեալ հեռագիրները.

1) Պարսկահպատակ մահմեդականների, հայերի, ասորիների և ուրիշների հասարակական հաստատութիւնների և կառավարական հիմնարկութիւնների ներկայացուցիչների յայտնած ցաւակցութեան մասին Ձեր ուղարկած հեռագիրը Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց կարդալ և յայտնել իր գոհունակութիւնը։ Շնորհակալութիւն յայտնեցէք տեղական իշխանութիւններին և բոլորին՝ Պարսկաստանին պատահած մեծ վշտի առիթով բարեկամական ցաւակցութիւն յայտնելու համար։

Մուշիր-դովլէ

2) Թիֆլիսի իշխանութիւնների և պարսկահպատակ մահմեդականների, հայերի և ասորիների հասարակական ներկայացուցիչների և ուրիշների շնորհաւորումների առիթով Ձեր ուղարկած հեռագիրը Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց կարդալ և յայտնել իր գոհունակութիւնը։ Շնորհակալութիւն յայտնեցէք բոլոր շնորհաւորողներին։

Ալաուսսալտանէ

3) Նորին Կայսերական Մեծութիւն Պարսից Շահի բարձրագոյն հրամանով Սուլթան Ահմէդ-Միրզան (ներկայումս Թագաւորող Մահմէդ-Ալի Շահի երկրորդ որդին) նշանակված է գահաժառանգ, որի մասին հրատարակվել է պաշտօնական ծանուցագիր և հաղորդված է օտարազգի մեծ պետութիւններին։

—

Թաւրիզ, 28 դեկտեմբերի

Ատրպատականի առաջնորդ Եզնիկ արքեպիսկոպոսը Թէհրան հետեւեալ հեռագիրն է խփել նոր Շահի գահ բարձրանալու առիթով.

«Նորին վսեմափայլութիւն պրեմիեր մինիստրի միջոցով՝ առ ոտս գահոյից Նորին մեծութիւն Իրանի Մահմէդ-Ալի Շահնշահի.

«Ընդհանուր հայ ազգի բարեգութ ու ողորմած հայր Շահնշահի մահվան բօթաբեր լուրը սուգի ու դառն վշտերի ծովում խորասուզեց ամբողջ հայ հասարակութիւնը։ Նորին մեծութեանդ արքայական գահը բարձրանալու առիթով, աղօթարար և տեղիս հայ հասարակութիւնը համախմբվելով աղօթատեղիներում, սրտագին ու անկեղծօրէն հանգուցեալ Շահի հոգու հանգստութեան ու Նորին մեծութեանդ անգին կենաց ու արևշատութեան համար աղօթում ենք և ջերմ բարեմաղթութիւններ անում։

«Բարեհաճեցէք ընդունել աղօթարարիս ու ամբողջ հօտիս ցաւակցութեան ու խորին վշտակցութեան զգացմունքները, նոյնպէս և Նորին մեծութեանդ գահակալութեան շնորհաւորական բարեմաղթութիւնները»։

Մնամ աղօթարար պետութեանդ յարատեւութեան՝

Եզնիկ արք-եպ. առաջ. ընդհ. հայոց Ատրպատականի։

Այդ հեռագրին ի պատասխան՝ Թէհրանից ստացվեց հետեւեալ հեռագիրը.

«Թէհրան, 4 զիհաջ 1324 (7 յունվարի 07 թ). Նորին սրբութիւն Եզնիկ արքեպիսկոպոսի, Թեմակալ առաջնորդ ամենայն հայոց Ատրպատական նահանգի, ընտրելագոյնը հայ հոգևորականութեան և գիտնական հետեւորդ Քրիստոսի, Թաւրիզում.

«Ձերդ սրբազնութեան՝ Նորին արքայական մեծութեանը հեռագրով ուղղած խնդիրը, որ պարունակում էր տխուր դէպքի առիթով ցաւակցութիւններ և Նորին մեծութիւն Շահնշահի գահակալութեան ու աշխարհակալ իշխանութեան համար շնորհաւորական մաղթանքներ, որի թագաւորութիւնը ու իշխանութիւնը Աստուած թող հաստատուն պահէ, ստացվեց ու Նորին կայսերական մեծութեան գահոյից ներկայացվեց. Նորին արքայական հոգին, որ հայ ազգի՝ տէրութեան պաշտող ճշմարիտ զգացմունքներից ու արքայասիրութիւնից միշտ գոհունակութիւն է ունեցել, նոյնպէս ձեր հոգեւորականութեան խորին հաւատարմութեան համար, որը այս միջոցին արտայայտեցիք, իր գոհունակութիւնն անհուն շնորհների հետ յայտնելով, հրամայեց, որ հայ ազգաբնակութիւնը ինչպէս միշտ տէրութեան մեծամեծների խնամատարութիւնն է վայելել, ապագայում ևս նրա հանգստութեան համար կատարեալ արտօնութիւններ շնորհվեն»։

Մուշիր-դովլէ

—

Թէհրան, 15 յունվարի.—Մէջլիսը անվաւեր ընդունեց պետական հողերի ընծայելը, որ կատարել է հանգուցեալ Շահը սահմանադրութիւնը տալուց յետոյ, և որոշեց ձեռնարկել նրանց վերաբերվող փաստաթղթերը և արձանագրութիւնները քննելու։

(«Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 15 յունվարի.—Պետերբուրգի զինուորա-նահանգական դատարանի նախագահ գեներալ-լեյտենանտ Րիկլէն նշանակված է գլխաւոր զինուորական դատախազ և զինուորական-դատաստանական գլխաւոր վարչութեան կառավարիչ։

(«Հ. Գ.»)

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վերջին օրերս ոստիկանական պաշտօնեաները տնից-տուն շրջելով յանձնում են ընտրողներին անուանական ծանուցագրերը և ընտրողական թերթիկները։ Սակայն պարզվել է, որ հասցէների մէջ շատ սխալ է սպրդել։ Շատերին տուած է եռեկական օրինակ, մինչդեռ ցուցակագրված ընտրողներից շատ-շատերը ծանուցումներ չեն ստացել։

—

Կիրակի օրը, յունվարի 14-ին, Կովկասի բժշկական ընկերութեան դահլիճում կայացել է Թիֆլիսի ընտրողների նախընտրական մի խորհրդակցութիւն։ Ժողովվել են 3-րդ թաղամասի ընտրողները՝ Պետական Դումայի անդամներ ընտրող պատուիրակներ մասնանշելու համար։ Ժողովում եղած վիճաբանութիւններից պարզվել է, որ Ռուսաստանում անհրաժեշտ է հաստատել պետական կազմ դեմոկրատական սկզբունքների վրա և ըստ կարելոյն լայն տեղական ինքնավարութիւն։ Իբրև պատուիրակներ (выборщики) 3-րդ թաղամասի կողմից մասնանշվել են. Բ. Գ. Կրասնեանսկի, (ապահովագրական ընկերութեան գործակալ), Ս. Ֆ. Սեմեօնով (մանկավարժ) և իշխ. Գ. Մ. Թումանով, (Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւոր)։

ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

Մեր շուրջը անպատուաբեր երևոյթներ են նկատվում։ Նախընտրական տենդը, ընտրական թերթիկները սկսած են երևան հանել մեր «յեղափոխական» գործիչների իսկական պատկերը, նրանց կեղծիքներն ու ֆալսիֆիկացիաները։

Նրանք, որոնք շարունակ ճառում են իրաւունքի անբռնաբարելիութեան, կամքի և խօսքի ազատութեան մասին, այժմ ընդունում են միայն գործողութեան ազատութիւն և միջոցների անխտրութիւն։

Մամուլը դեռ անցեալ տարվայ ընտրութիւններին արձանագրեց մի շարք զեղծումներ, ընտրող քաղաքացիները տրտունջներ արտայայտեցին մեր սօցիալ-դեմօկրատների արածների դէմ, սակայն այդ զեղծումները կրկնվում են և այսօր մի ամբողջ տարուց յետոյ։ Եւ որ զարմանալին է, այդ զեղծումները կատարվում են մի այնպիսի կուսակցութեան կողմից, որը հենց ինքն էր մեղադրում ուրիշներին։ Մի ամիս առաջ «Երկիր» լրագիրն էր մերկացնում սօցիալ-դեմօկրատներին, իսկ այսօր Դաշնակցութիւնը ինքն է հետևում նրա օրինակին։

Տարօրինակ է, բայց և շատ բնորոշ. ի հարկէ, այլ բան է խօսքը և այլ բան գործը։

Մարդիկ ընտրվելու ցաւով բռնված անպատեհ ուզում են յաղթած լինել, լինի այդ յաղթութիւնը գաղափարական և պատուաբեր, թէ անգաղափարական և անպատուաբեր,—այդ նրանց համար միևնոյնն է։

Եւ այդ հասկացողութեան շնորհիւ ահա թէ ինչ է կատարվում մեր շուրջը։

«Մշակ»-ի երեկվայ համարում արդէն յիշված էր, որ զեղծումներ են կատարվում և որ այդ առիթով մի խումբ մարդիկ դիմել են քաղաքագլուխ Զիրբեզովին և խնդրել միջոցներ ձեռք առնել։ Ռուսաց լրագիրները յիշատակել էին, որ այդ զեղծումները կատարել են դաշնակցականները։

«Հօսանք»-ը նոյնպէս տպագրել է մի քանի փաստեր. «բանւոր Շաղուհը» հաղորդում է, յունվարի 15-ին.

«Երեկ մի քանի դաշնակցականներ VII քաղաքամասում տնից-տուն ման գալով ասում էին, որ ձեր ծրարները մեզ մօտ են, եթէ ուրիշներ —պօլիցէյից՝ կամ սօց.-դեմօկրատներից բերեն՝ չը վերցնէք, դուք համոզված եղէք, մենք ինքներս կը գրենք և ամսի 27-ին կը բերենք ձեզ կը տանք, իսկ 28-ին դուք կը տանէք կը յանձնէք ուր հարկն է։

«Բացի այս, մենք մեր աչքով տեսանք, որ մի խումբ դաշնակցականներ էլ, նոյն քաղաքամասի ոստիկանատան մօտ կանգնած, անց ու դարձ անողներին բռնում և յայտարարում

էին, որ չը յանդգնին սօց.-դեմօկրատներին ձայն տալ, այլ պէտք է անպատճառ Դաշնակցութեան ձայն տան։

«Որպէս ականատես, մենք մնացել ենք զարմացած, թէ ընտրողական գործի մէջ միթէ կարելի է այս աստիճան մանրանալ ու պօլիցիայի օգնութեան ու աջակցութեանը դիմել։

«Պարոններ, կաւ, բլօկ մեզ շատ լաւ հասկանալի է. բայց բլօկ ոստիկանութեան հետ։ Ճշմարիտ, որ այդ խիստ սաղ է գալիս Դաշնակցութեան, միայն և միայն նրան...»

Բայց ահա ուրիշ աւելի կօնկրետ դիտողութիւններ։

Յունվարի 15 ին և 16-ին IV քաղաքամասում, Վօզնեսենսկի փողոցի վրա № 23 տան մէջ, մի ինչ որ պարոնի բնակարանի դանլիճը կատարեալ կանցելարիա էր ներկայացնում. սեղանի վրա թափթփված էին ընտրողական ծրարները, և գօրօդօվօյները, երևի, տանտիրոջ (դաշնակցական) հրամանով էլ դասաւորում ու բաժանում էին նրանց ընտրողներին։

Միանգամայն հանելուկ է մնում այդ հանգամանքը. ինչ կապ ունեն ընտրողական ծրարները յիշեալ պարոնի հետ և ինչու են գտնվում նրանք մի մասնաւոր մարդու բնակարանում։ Որքան մեզ յայտնի է, ծրարները յանձնված են ոստիկանութեանը և վերջինս էլ միայն պէտք է յանձնէ ընտրողներին։

Մինչեւ խրողութիւնը այլ բան է ասում։

Բայց կայ և մի ուրիշ հանգամանք. քաղաքային վարչութիւնն էլ անմասն չէ այն պատասխանատուութիւնից, որ նրա անփութութեան պատճառով ստեղծվում է։

Ընտրողական ցուցակների մէջ մտել են այնպիսի մարդիկ, որոնք մեռել են մի քանի տարիներ առաջ և նրանց անունով էլ այժմ ծրարներ են ուղարկվում (այդպիսիների թիւը ինձ յայտնի մի փոքրիկ շրջանում հասնում է 5-ի). մի քանի ընտրողների անունով ուղարկված է երեք ծրար, երկուսը հօր անունով, մէկը՝ որդու. ցուցակի մէջ մտցված է 18 տարեկան մի պատանի (ինձ յայտնի է 4 օրինակ). ընտրողական ցուցակի մէջ մտցված են պարսկահպատակներ։ Մի քաղաքամասի ընտրողի ծրարը ուղարկված է մի ուրիշ քաղաքամաս, և ընդհակառակը, մէկը ընտրողական ձայն ունի 4-րդ քաղաքամասում, մտցված է 6-րդի ցուցակների մէջ։

Այդպիսով տիրում է մի այնպիսի քաօս, որի հետևանքը ընտրողական գործի կանօնաւորութեան վրա միայն բացասական ազդեցութիւն կարող է ունենալ։

Յիշատակելով այդ փաստը, պարտաւոր ենք համարում հրաւիրել ընտրողների ուշադրութիւնը, որպէսզի զգուշութեամբ վերաբերվեն և զոհ չը դառնան այդ ընտրողական ֆալսիֆիկացիային։

Քաղաքացու համար եթէ կայ ներկայումս մի աւելի կարևոր պարտականութիւն, դա ընտրողական պարտականութիւնն է, դա ձայնի իրաւունքն է։

Վերաբերվենք այդ պարտականութեանը գիտակցաբար, խնայենք մեր ձայնը, որ մեր իրաւունքի ու կամքի արտայայտիչն է, և թոյլ չը տանք բռնաբարելու ու շահագործելու նրան։

Ամեն մի ընտրող, նախ քան իր ծրարը ստանալու համար ստորագրելը, պարտաւոր է ստուգել երկու օրինակ թերթիկները թէ՝ մաքուր է, արդեօք, և ապա միայն ստանալ, և ընդհակառակը՝ չընդունել, եթէ նրա վրա գրված են արդէն լիազօրների անունները, ու բողոքել նորը ստանալու համար։

Զգուշացէք ուրեմն, ընտրողներ, որպէս զի չը կորցնէք ձեր ընտրողական ազատ իրաւունքը։

Լ. Դանիէլեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶ, 13 յունվարի։ Երկար բանակցութիւններից յետոյ հոկտեմբրականները մերժեցին նախընտրական բլօկ կազմել ռուս ժողովրդի դաշնակցութեան հետ։

ՏՈՒԼԱ, 15 յունվարի։ Հոկտեմբրականները բլօկ կազմեցին «ռուս մարդկանց դաշնակցութեան» հետ և արդէն սկսել են գրաւոր ագիտացիա մղել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Պետերբուրգի ծայրերի թաղամասերի 57 գործարանա-ֆաբրիկային ձեռնարկութիւնների մէջ 37,478 ընտրողներից եկան 33,167 հոգի, որոնք ընտրեցին 92 լիազօրներ, որոնց թւումն են 79 ռուսներ—ուղղափառներ, 11 լեհ—կաթօլիկներ, 2 էստօնցի—լիւթերականներ։ Բոլորն էլ պատկանում են ձախակողմեաններին։

Տամբօվի նահանգի մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւնները. ընտրվել են 17 հոգի, բոլորն էլ չափաւորականներ են։

Պէնզայի նահանգում, Կրասնօսլոբոդսկի և Սարանսկի գաւառներում ընտրվել են 37 լիազօրներ, որոնցից 21 հոգին չափաւորականներ են։

Պսկօվի նահանգում, Օստրօվսկի և Տօրօպեցկի գաւառներում ընտրվել են 11 լիազօրներ։

Մինսկի նահանգում, Պինսկի, Մինսկի, Բօրիսօվսկի, Մօզիրէվսկի, Ժգումէնսկի գաւառներում ընտրվել են 86 հոգի, որոնցից 19-ը միապետականներ են և չափաւորներ։

Գրօդնէնսկի նահանգում, Սօկօլսկի, Սլօնիմսկի և Բէլօստօկի գաւառներում ընտրվել են 100 հոգի, որից 69 չափաւորներ են։

Կօստրօմսկի նահանգում և գաւառում ընտրվել են 6 հոգի, որոնցից 5-ը չափաւորներ են։

Աստրախանի նահանգում, Խօտակէվսկի գաւառում ընտրվել է 1 չափաւոր անձն։

Վիտէբսկի նահանգի Լիւցինսկի գաւառում ընտրվել են 17 լիազօրներ։

Շրջանային ժողովների, բանւորների և մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւնների հետևանքները յունվարի 12, 13 և 14-ի հեռագիրների համաձայն ներկայանում են այսպէս. ընտրվել են 2927 լիազօրներ, որոնցից 1167-ը միապետականներ են, 790-ը չափաւորականներ։ Շրջանային ժողովների լիազօրների կողմից. Օրլօվի նահանգում 197 ժողովներում ընտրվել են 384 լիազօրներ, որոնցից 40-ը միապետականներ են, 296-ը՝ չափաւորականներ։

Կալուգայի նահանգում, Ժիզդրինսկի, Տարուսկի, Մասալսկի, Բօրօվսկի և Մէշօվսկի գաւառներում ընտրվել են 186 հոգի, որոնցից 130-ը միապետականներ են և 47-ը չափաւորականներ։

Նարօվլավսկի նահանգում ընտրվել են 42 լիազօրներ, որոնցից 5-ը միապետականներ են։

Բէսարաբսկի նահանգում 12 ժողովներում ընտրվել են 24 հոգի, որոնցից 5-ը միապետականներ են և 19-ը չափաւորներ։

Բանւորների կողմից. Կալուգայի նահանգում 9 ձեռնարկութիւնների մէջ ընտրվել են 9 հոգի, որոնցից 4 ը միապետականներ են։ Կալուգայում ընտրվել են 2 չափաւորականներ։

Մօսկվայում, ստացված պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, 350 ձեռնարկութիւնների մէջ ընտրութիւնները կայացել են 311-ում. ընտրվել են 313 լիազօրներ, որոնցից 191-ը միապետական-չափաւորականներ են. 39-ում չեն կայացել՝ բանւորների մէջ եղած տարաձայնութիւնների և գործարանների փակ դրութեան պատճառով։

Տաւրիկեան նահանգում, Սեվաստոպօլի նաւահանգստի 5 ձեռնարկութիւնների մէջ ընտրվել են 7 հոգի։

Կիեվի բոլոր նահանգներում մանր հողատէրերի լիազօրների ընտրութիւններին ընտրվել են 520 հոգի, որոնցից 298-ը միապետականներ են, 222 չափաւորականներ։

Պսկօվի նահանգում, Պօրօխօվսկի գաւառում ընտրվել են 6 հոգի, որոնցից 2-ը միապետականներ են, 1-ը չափաւոր։

ՄԱՄՈՒԼ

Յունվարի 14 ին լոյս տեսաւ «Кавказская Рѣчь» լրագրի առաջին համարը նոր խմբագրութեամբ։ Խմբագրական յօդուածում լրագիրը այսպէս է բնորոշում իր credo-ն.

Ասել, որ մենք պաշտպանելու ենք ժողովրդի շահերը, կը նշանակէր ինչպէս ոչինչ չասել։ Ռուսաստանում չը կայ մի լրագիր, որ նպատակ չունենար ծառայել ժողովրդի շահերին։ Այդ պատճառով «ամեն ինչ ժողովրդի համար» լօզունգը այլևս որոշ բան չէ արտայայտում։ Անհամեմատ աւելի վառ կերպով կարելի էր որոշել մեր դիրքը, եթէ որ այդ լօզունգին աւելացնէինք՝ «ամեն ինչ ժողովրդի միջոցով»։ Այդ երկու սկզբունքները հաշտեցնելու մէջ,—որոնք ռամկավարութեան հիմքն են կազմում,—մենք տեսնում ենք մեր գլխաւոր նպատակը։ Մեզ համար ժողովրդի—իր ազատ և գիտակցական մասնակցութիւնը իր իրաւունքների համար մղվող կռւին, հակառակ մասնաւոր անհատների կամ խմբակների «բարեգործական» և «հերոսական» ջանքերին,—ինքն ըստ ինքեան արդէն ներկայացնում է որոշ նպատակ, որովհետև միայն նա կարող է տալ ժողովրդին այն քաղաքական դաստիարակութիւնը, առանց որի անհնարին է ժողովրդական ոյժերի ոչ մի հիմնաւոր կազմակերպութիւն, ապա ուրեմն և հիմնաւոր ժողովրդական ազատութիւն։

Դրանով էլ, կարծում ենք, բաւականաչափ որոշվում է մեր առնչութիւնը թէ ձախից և թէ աջից։ Աջից մեզ համար օտար կը մնան ժամանակակից կազմին ստորադասվելին ծագումն վերագրող թէօրիայի կամայ թէ ակամայ ադեպտները։ Ձախից՝ մեզ չեն հասկանալ միայն նրանք, այն խմբակները, որոնք զոհաբերում են այնքան անհամար զոհեր ռօմանտիկային յեղափոխութեան մէջ։ Այդ երկուսին էլ, որոնք փորձ կանեն բռնաբարելու ժողովրդին, հաւասարապէս կը պատասխանենք անգլիական լիբերալ կառավարութեան ղեկավարի հետեւեալ խօսքերով. «Լաւ կառավարութիւնը երբեք չէ կարող փոխարինել ժողովրդական կառավարութեանը (ինքնավարութեանը)»։

Ապա լրագիրը յայտնում է, որ այդ քաղաքական խորիմաստ միտքը, որ կոփված է Եւրօպայի ամենահարուստ ու ամենաազատ երկրի դարաւոր փորձով, իր դաւանած ծրագրի հիմքն է կազմում։

Հետևելով այդ սկզբունքներին, մենք, գուցէ, ընտրում ենք երկար և տակուն աշխատանքի ուղին, սակայն այդ շաւղի վրա մենք չենք սպասում ոչ այն հիասթափութիւնը, ոչ էլ հասարակական ոյժերի այն ապատիան, որոնք միշտ ուղեկից են հանդիսանում ժողովրդական ոգևորութեան շողենման զրգռումին։

Ահա այդպէս է գծում իր ուղին թերթի խմբագրութիւնը։ Նրա ղեկավար ոյժերի անձնաւորութիւններն ու համոզմունքները մեզ թոյլ են տալիս կարծելու, որ լրագիրը ընդունակ կը լինի համախմբելու իր շուրջը ժամանակակից ինտելլիգենցիայի տեղական ոյժերը և ընթերցողների մեծ թիւ։ Մի այդպիսի օրգանի հրատարակութեան անհրաժեշտութիւնը մեզանում վաղուց էր զգացվում. այդ պատճառով մենք ողջունում ենք նրա երևան գալը և աջողութիւն ենք մաղթում։

*

Համարեա աչքի ընկնող բոլոր լրագիրները Գուրկօյի գործի առիթով արտայայտել էին իրանց կարծիքը, միայն «Новое Время»-ն էր, որ զգաբիական լռութիւն էր պահպանում, չէր ուզում միանալ այդ մութ գործի մերկացումներին։ Սակայն այժմ, սուվօրինեան քաջասիրտ հրապարակախօսը համարձակութիւն է ստանում գալ Գուրկօի բուրջը։ Ի հարկէ, այդ պատիւը պատկանում է Մենշիկօվին, որ քաջութիւն է ունենում, նոյնիսկ յանդգնում է շօշափել հարցի սկզբունքային կողմը։

Ահա թէ ինչով է սարսափելի մեր անբարեկարգ Ռուսաստանը։ Կառավարող դասակարգի անպատասխանատու լինելը անբարոյականացրել է նրան։ Ես չեմ խօսում ակներև գողութեան և նրա հազար ու մի ձևերի մասին. կեղծ կենսաթօշակների, կապալների, պարգևների, նպաստների մասին և այլն։ Ակներև գողութիւնից բացի կայ ոչ պակաս քայքայիչ ու աւելի վնասակար ուրիշ ձև. դա պետական փողերը չը խնայելու ձևն է։ Ուղղակի անմտութիւն է, երբ ներկայումս խօսում են զանազան տեսչութիւնների մէջ տնտեսելու մասին. դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մոլորեցնելու մի միջոց։ Տնտեսելու երևոյթը մեզանում չէ եղել և այժմ էլ չը կայ։ Պատասխանատուութիւն։ Ի՞նչ պատասխանատուութիւն կարող է լինել այնտեղ, որտեղ մինիստրին աքսորի փոխարէն սպասում է պետական խորհրդի ոսկեզօծ բազկաթոռը։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Յունվարի 10 ին

Երէկ, յունվարի 9-ին, առաջին բանւորական շարժման տարեդարձին Պետերբուրգում սպասվում էին ցոյցեր և գործադուլներ։ Սակայն օրը անցաւ խաղաղ և միայն մասնակի գործադուլներ եղան մի քանի գործարաններում։ Մի քանի լրագիրների մէջ տպվեցին յիշողութիւններ Գապօն քահանայի մասին։

Նախընտրողական պայքարը սկսվել է։ Բանւորական լիազօրների ընտրութիւնը արդէն կատարվում է և մինչև հիմա կատարված ընտրութիւնների մէջ յաղթանակ տարել են ձախակողմեանները և գլխաւորապէս սօցիալ-դեմօկրատները։ Սակայն ընդհանուր ենթադրութիւնն այն է, որ պատուիրակների (выборщики) և Պետական Դումայի պատգամաւորների ընտրութեան մէջ վերջնական յաղթանակը կը տանեն կադէտները։

Հարց է եղել գրված կադէտների և սօցիալ-դեմօկրատների բլօկի մասին, սակայն սօցիալ-դեմօկրատական վերջին կօնֆերենցիայի մէջ, երբ «փոքրամասնականները» թողեցին և հեռացան, մեծամասնականների ֆրակցիայի միացած 39 անդամները կայացրին որոշումն, որով «համաձայնութիւնը սահմանադիր-ռամկավարականների հետ գտան անթոյլատրելի և քաղաքականապէս վնասակար», իսկ համաձայնութիւնը ձախակողմեան կուսակցութիւնների հետ թոյլատրել միայն սօցիալիստ-յեղափոխականների և աշխատաւոր խմբի հետ։ Կօնֆերենցիան մերժել է համաձայնութիւն կամ բլօկ կայացնել նոյնիսկ ժողովրդական-սօցիալիստական կուսակցութեան հետ, գտնելով որ այդ կուսակցութիւնը կիսա-կադէտային և կիսա-աշխատաւորային է։

—

Ռուսաց ժողովարանը (Русское Собраніе) հրատարակել է իր մանրամասն ծրագիրը, որի մէջ շօշափելով պետական, սօցիալական, ագրարային բոլոր հարցերը, երբև պետական կազմի հիմք ընդունում է ինքնակալական ռէժիմը, Ռուսաստանի անբաժանելիութիւնը, Ցարի անպատասխանատուութիւնը, և գտնելով, որ բոլոր չարիքները ու աղէտները ծագում են հրէաներից, պահանջում է, որ հրէաների առաջ անպայման փակվեն բոլոր պետական պաշտօնները և միանգամայն վերացվի նրանց հաւասար իրաւունքներ տալու հարցը։ Քրիստոնէական օտար դաւանութիւնների վերաբերմամբ ծրագիրը ասում է թէ՝ «չը հաշտվելով այն մտքի հետ, թէ որևէ մի օտար դաւանութիւն կարող է պրօպագանդա անել ուղղափառների մէջ, նա այնու ամենայնիւ յարգանքով է վերաբերվում իրանց քրիստոնեայ կոչող բոլոր միւս դաւանութիւններին և կրօնական հայեացքների տարբերութեան մէջ չէ նկատում քաղաքական տարբերութիւն»։ Գալով մուսուլմաններին, ծրագիրը ասում է. «Ժողովը ոչ-քրիստոնեայ դաւանութիւններին վերաբերվում է պարզ ու պատշաճ համբերողութեամբ, իսկ քաղաքական տեսակէտից արտայայտում է համակրութիւն մուսուլմաններին, որոնք մեծամասնութեամբ հանդիսանում են առողջ քաղաքական հայեացքների, կարգի և պետական միութեան յուսալից նեցուկ»։

Հ. Ա.

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆԻՑ

Յունվարի 13 ին

Գանձակի նահանգապետ Կալաչեվ ամսիս 10-ին նահանգական կառավարութիւնն էր հրաւիրել քաղաքիս հայ և թուրք ներկայացուցիչներին նահանգի արկածեալների օգնութեան վերաբերեալ հարցը քննելու և այդ մասին խորհրդակցելու համար։ Խորհրդակցական ժողովին ներկայ է եղել նահանգապետ Կալաչեվ, փոխ-նահանգապետ Բարանօվսկին և սօվետնիկ Կլեչչինսկին։ Հայ հասարակութեան կողմից ժողովին մասնակցել են առաջ. փոխանորդ Կորիւն վարդապետը, իրաւաբան պ. Ի. Խօջայեան, կալուածատէր Ասլանբէգ Մելիք-Շահնազարեան և Միքայէլ Աֆանասեան։ Թուրքերի կողմից ժողովին ներկայ է եղել ախունդը, իրաւաբան պ. Ջիաթխանօվ և աշխարհահռչակ Ալէքպէր բէգ Ռաֆիբէկօվ։

Նահանգապետ Կալաչեվ ժողովը բանալով յայտնում է, որ բժ. Բահաթրեանի խնդիրքի հիման վրա, Փոխարքան կարգադրել է, որ նահանգապետի նախագահութեամբ Գանձակում մի նպաստամատոյց մասնաժողով ընտրվի գաւառիս և քաղաքումս գտնվող հայ և թուրք արկածեալներին օգնութիւն հասցնելու համար։ Ալ. Ռաֆիբէկօվը ժողովին յայտնել է, որ Բագւում Փոխարքայի թոյլտւութեամբ կազմակերպվել է Թաղիևի նախագահութեամբ թուրք նպաստամատոյց Յանձնաժողով, որի անդամներից մէկը՝ Աղաեվը անցեալներում յատուկ այդ նպատակով եկած էր Գանձակ և այդ մասին ժողովներ ունեցան, որտեղ թուրք հասարակութիւնը ընտրեց Աղքատախնամ Յանձնաժողովի անդամներ 20 հոգուց բաղկացած, որոնց մէկն էլ ինքն է, և գաւառը բաժանված է 15 մասերի և իւրաքանչիւր մասի հոգացողութիւնը յանձնված է մասնաժողովի անդամներին, և խնդրել է նահանգապետ Կալաչեվին իրանց յանձնաժողովի նախագահը լինելու։

Հայերի կողմից առաջ. փոխանորդ Կորիւն վարդապետը յայտնել է ժողովին, որ դեռ նախանցեալ տարվայ փետրվարից հայերը ունեն Թիֆլիսում Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողով, հաստատված Վեհափառ Կաթողիկոսից։ Նպաստամատոյց Յանձնաժողովը ունի իր ճիւղերը բոլոր վայրերում Աղքատախնամ Յանձնաժողով անունով։ Գանձակում ևս վաղուց գոյութիւն ունի Աղքատախնամ մասնաժողով, որի նախագահը ինքն է և որը հոգում է ինչպէս քաղաքիս, նոյնպէս գաւառիս արկածեալների կարիքները. սկզբում նպաստներ տրվում էին դրամով, շորերով, բայց վերջին ժամանակումս միայն հացահատիկով։ Յանձնաժողովի գործունէութեան հաշիւներից մէկ օրինակ խոստացել է ներկայացնելու նահանգապետին։

Նահանգական - խորհրդական Կլեչչինսկին դրել է մի վերին աստիճանի արդար և խելացի հարց։ Նա առաջարկել է ժողովին, որ ժողովարարութիւնը չը պէտք է սահմանափակել հայերի և թուրք ազգաբնակութեան շրջաններում, և կարևոր է գտել, որ դիմումներ անվեն ուրիշ նահանգների պետական հաստատութիւնների նախագահներին, բոլոր ռուս մարդկանց և կանանց, կազմակերպեն վիճակախաղեր, երեկոյթներ, տան ներկայացումներ, և իւրաքանչիւրը իր շրջանում այդ նպատակով ժողովարարութիւն անի. մինչև անգամ պէտք է դիմել հարևան գերմանացիներին, մալականներին և միւս ազգերին, որոնք կը տան իրանց նպաստները։ Խորհրդական Կլեչչինսկու գեղեցիկ և նպատակայարմար առաջարկութիւնը ընդունվել է ժողովի կողմից։

Մաղթենք աջողութիւն և ցանկանք, որ Կլեչչինսկու առաջարկութիւնը աջող ելք ստանայ։

Ա. Սահակեան

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Պետերբուրգի Նկարչական ճեմարանի պրօֆեսօրների խորհրդի մէջ ծագած անախորժութիւնները քանի գնում՝ աւելի սուր կերպարանք են ստանում, և սպառնում դեռ երկար ժամանակ պահել ճեմարանը այդ աննորմալ վիճակի մէջ։ Պրօֆեսօրների յունվարի 3-ին ունեցած խորհրդակցութեան ժամանակ ճեմարանը փակելու հարցը դարձեալ աջողութիւն չունեցաւ և թողնվեց յաջորդ խորհրդակցութեանը, որը պէտք է կայանար յունվարի 9—10-ին։ Լուր է տարածվել, որ ճեմարանի դասատուները բոլորն էլ հրաժարվում են։

—Ժողովրդական ընդհանուր պարտադիր կրթութեան նախագծի քննութիւնը մասնաժողովը մօտ օրերս կը վերջացնի։ Նախագծի մէջ որոշված 10 տարեկան հասակը պարտադիր կրթութեան համար մասնաժողովը դուրս է գցել, որովհետև դրա իրագործելը կախված կը լինի տէրութեան ֆինանսական դրութիւնից։ Վճռված է ժողովրդի նախնական կրթութեան համար իւրաքանչիւր տարի 10 միլիօն ռուբլի աւելացնել, մինչև որ բոլոր ծախքերը կը ծածկվեն։ Ընդհանուր կրթութիւն մտցնելը վերջին տարին կը պահանջի երեք ու կէս միլիօն ռուբլի։ Այդ նախագիծը կառաջարկվի Պետական Դումային հէնց առաջիկայ նստաշրջանում։

—Նոր տարվայ առաջին գիշերը Պետերբուրգում, Վասիլեվսկի կղզու վրա, կալանաւորել էին 10 հոգու, որոնց թւում գտնվում է և տեխնօլօգիական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող Եանօվիցկին։ Որովհետև քաղաքում լուրեր էին տարածվել, որ նրանց պէտք է դատեն զինւորական-դաշտային դատարանով, այդ պատճառով յունվարի 4-ին տեխնօլօգիական ինստիտուտի ուսումնական մասնաժողովը արտակարգ նիստ է գումարել խորհրդակցելու այդ առիթով։ Որոշված է պատգամաւորութիւն ուղարկել պրեմիէր Ստոլիպինի մօտ և բացատրել նրան այն վատ հետևանքները, որոնք կարող են առաջ գալ, եթէ նրանց ենթարկեն զինւորական-դաշտային դատարանի։ Այդ պատգամաւորութեան մէջ մտել են ինստիտուտի դիրեկտոր պրօֆ. Վօրօնինը և պրօֆ. Դենին։

Լուսաւորութեան մինիստրը այդ առիթով հաղորդել է, որ այդ 10 հոգուն զինւորական-դաշտային դատարանին յանձնելու վտանգը վերացված է արդէն և որ այդ գործը յանձնված է առանձին յանձնարարութիւնների քննիչին։ Յունվարի 5 ին ինստիտուտի մասնաժողովը նորից նիստ է կազմել և վճռել է, ի նկատի առնելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հաղորդած տեղեկութիւնը, առայժմ պատգամաւորութիւնը չուղարկել պրեմիէրին, այլ ուղարկել միայն մի ռեզօլիւցիա, որով յոյս են յայտնում, որ դաշտային դատարանին չի յանձնվի գոնէ ինստիտուտի ուսանող Եանօվիցկին, որը յայտնի է անձամբ մասնաժողովի անդամներին։ («Товарищъ»)

—«Сегодня» լրագիրը հաղորդում է, որ յունվարի 4-ին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ընդունել է Տօմսկի տեխնօլօգիական ինստիտուտի պատգամաւորութեանը, որը բաղկացած է եղել պրօֆեսօրներ Մօլինից, Նեկրասովից և Միխլուլինից, որոնք եկած են եղել Պետերբուրգ զեկուցանելու ինստիտուտի աննորմալ դրութեան մասին, որը առաջացել է շնորհիւ այն բանի, որ աքսորվել են՝ դիրեկտոր Զուբաշեվ, պրօֆեսօրներ Կիժներ և Տիրասպօլսկի, նոյնպէս և ուսուցիչներ Կոզմին և Բունդիկով։ Պատգամաւորութիւնը հարկաւոր է համարել մատնանշելու մինիստրին, որ անհրաժեշտ է աքսորվածներին վերադարձնել, որովհետև անհնարին է պարապմունքները շարունակել ներկայ ակադեմիական տարվայ երկրորդ սեմեստրում առանց յիշեալ անձանց դասախօսութիւնների։ Մինիստրը խոստացել է նրանց վերադարձնելու հարցը լուծել մօտ ժամանակներս։

ԱՅԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, ԱՅԼ ԵՐԳԵՐ

Որչափ Պետական Դումայի ընտրութիւնները մօտենում են, այնչափ էլ աջակողմեան բանակի մէջ աւելի ու աւելի անհանգստութիւն է նկատվում։ Այլևս ոչ միայն չէ լսվում զանազան Պօրաշկևիչների այն խրոխտանքը, թէ միլլիօնաւոր ժողովուրդներ են իրանց ետևում կանգնած, որոնք երկրորդ Պետական Դումայի ընտրութիւններին կապացուցանեն, որ «կրամօլնիկները» մի աննշան փոքրամասնութիւն են կազմում Ռուսաստանում, այլ և ընդհակառակը, նրանք այժմ բոլորովին այլ երգեր են երգում։ Ըստ երևոյթին, նրանք այժմ հետզհետէ համոզվում են, որ իրանց ենթադրեալ հետևողների թիւը ոչ թէ միլլիօններն, այլ հազիւ հազարների է հասնում, ուստի և ոչ մի յոյս չը կայ Դուման այդ «անիծված կրամօլնիկներից» ազատել. «ուրեմն,—մտածում են նրանք,—աւելի լաւ չի լինի, որ Դումայի գումարումը մի առժամանակ յետաձգվի»։

Հէնց այդպիսի եղանակով երգեր են երգվում այժմ բոլոր պահպանողական թերթերում։

«Ռուսաստանը այժմ ոչ Պետական Դումայի և ոչ էլ շտապով կազմված նոր օրէնսդրութեան կարիք ունի, որ և կարելի է յետաձգել, թէև անցեալ տարվայ աշնանից այդ օրէնսդրութեան մէջ աւերակների անհագին կոյտեր են թափված և կեանքի ու վարչութեան ամբողջ շրջաններ են խորտակված»։

Այսպէս է այժմ երգում յուսահատված «Моск. Вѣд.» արքի-միապետական թերթը որը դեռ մի ամիս առաջ միայն բոլորովին այլ տոնով էր խօսում։ Իսկ «Нов. Врем.»-ն, որը մինչև վերջին ժամանակներս կադէտներին «ոճրագործ, դաւաճան, բունտօվշչիկ, եղուիտ» և այլ այս կարգի ածականներով էր միշտ մկրտում, այժմ սկսել է նոյն այդ կադէտներին հետ բոլորովին այլ և շատ քաղաքավարի ոճով խօսել։ Նա հիմա այդ «դաւաճան-ոճրագործներին» ոչ միայն «պ. պ. կադէտներ ու մեծապատիւ պարոններ» է անուանում, այլ և մինիստր Ստոլիպինի եղբայր հրապարակախօս Ա. Ստոլիպինի բերանով նրանց առաջարկում է այս նախընտրական պայքարի ժամանակ լեգալիզացիա անել տալ իրանց կուսակցութիւնը և ազատ-համարձակ կերպով ժողովներ գումարել ընտրողական պայքար մղելու համար։ Եւ պ. Ա. Ստոլիպինը հաւաստիացումներ է անում, թէ կառավարութիւնը այժմ բոլորովին հակառակ չի լինի այդ բանին և շատ հեշտութեամբ լեգալիզացիա կանի կադէտներին։

Առաջին անգամից, ի հարկէ, մարդ չէ կարողանում հասկանալ կուրսի այդ յանկարծական փոփոխութիւնը և ըմբռնել ստոլիպինեան ժպիտների իմաստը, սակայն, ինչպէս և շատ իրաւացի կերպով նկատում է «Товарищъ» թերթը, այդ ժպիտների տակ մի շատ խորը նենգութիւն է թաղնված. բիւրօկրատիայի մեծախօս ու միշտ խորտակվող կուսակիցների բանակը, տեսնելով մի կողմից իրանց անյուսալի թուլութիւնը, իսկ միւս կողմից ընդդիմադիր ձախակողմեան բոլոր կուսակցութիւնների փոխադարձ համաձայնութիւնները ընտրութիւնների վերաբերեալ, այժմ մի հնարք է փնտռում այս վերջինների մէջ երկպառակութիւն և անջատում առաջացնելու, որպէս զի ինքը, հակառակորդների բաժան-բաժան լինելու շնորհիւ, աւելի զօրաւոր հանդիսանայ։ Եւ նա երկար խորհելուց յետոյ, մտածել է, ինչպէս մեր ժողովուրդն է ասում, կադէտների գլխին հօպալի խաղ քսել, նրանց լեգալիզացիայի յոյսերով օրօրել ու այդ խնդիրներով զբաղեցնել, որպէս զի նրանք իրանց արտօնեալ վիճակից շլացած այլ ևս շատ էլ բլօկների ետևից չընկնեն։

Պետական քաղաքականութիւնը հասարակ խորհրդների ու խարդախութիւնների մէջ որոնող բիւրօկրատական կուսակցութիւնները կարծում են, թէ միւս կուսակցութիւններն էլ իրանց նման տեղս են քաղաքական գործունէութեան մասին, որպէս զի այնպէս հեշտ լինի նրանց այս ու այն խորամանգ միջոցներով շեղել իրանց ընդգծած ճանապարհից։ Այդ բանը, ի հարկէ, նրանց չի աջողվի և դրա մէջ չէ խնդրի էական կողմը, այլ շատ աւելի այն, որ, ինչպէս ասացինք վերևում, պահպանողական բանակը յուսահատական խիստ վայրկեանի մէջ է և հիմա բոլորովին այն չէ երգում, ինչ նա երգում էր ամիսներ առաջ։

Ռ.

ԴՊՐՈՑԻ ՄԻՋԱԴԷՊԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ Շուշուց, յունվ. 10-ին)

Մեր մի շարք թղթակցութիւններով («Մշակ» №№ 270, 272, 274, 276, 283, 2) մանրամասն և բազմակողմանի կերպով կանգ առնելով թեմական դպրոցում առաջացած միջադէպի վրա, բոլոր տեսակէտներից լուսաբանելով այդ կնճռոտ խնդիրը, յայտնել էինք այն միտքը, որ երկու հակառակ բանակների բաժանված աշակերտները պէտք է որ աշխատեն Ծննդեան տօներին ընդմիշտ վերջ տալու իրանց մէջ ծագած անախորժութիւններին, և հաշտութեան անկեղծ ձեռք մեկնելով իրար, վերսկսելու դպրոցական պարապմունքները և այդպիսով վերականգնելու աշակերտական նախկին յարաբերութիւնը։ Բայց իրերի դրութիւնը ցոյց է տալիս, որ մենք չափազանց սխալված ենք եղել, քանի որ դպրոցի հոգաբարձութիւնը, ամսիս 7-ի նիստում, նորից քննելով միջադէպը, հետևեալ որոշումն է կայացրել.

«Հոգաբարձութեանս անցեալ տարվայ դեկտեմբերի նիստի որոշման համաձայն, բողոքող աշակերտները պիտի գային քննութեան։ Այժմ, երբ դրանք հրաժարվում են քննութիւնից, հոգաբարձութիւնս իր ամսիս 7-ի նիստում որոշեց՝ … ժամանակաւորապէս դադարեցնել դպրանոցիս Vրդ, IVրդ, IIIրդ և IIրդ … ների պարապմունքները, մինչև այդ … աշակերտների օրինական կերպով քննութեան գալը։

«Որպէս զի միացեալ դասարաններում պարապմունքները չը … գարվեն, դպրանոցի մուտքը վերոյիշեալ … անցիների համար միանգամայն արգել…

«Թեմական դպր… հոգաբարձութիւն»։

1907 թ. յունվարի …

Շուշի

Այսպէս, ինչպէս ընթերցողը տեսնում է, դպրոցի հոգաբարձութիւնը կամենում է օրինական կերպով քննել միջադէպը. մենք համաձայն ենք այդ կէտի հետ. անաչառ քննութիւն թող կատարվի, բայց պարապմունքները մի դադարեցնէք։ Միթէ հոգաբարձութիւնն անզօր էր տօներին վերջ տալու այդ կնճռոտ հարցին. միթէ հն… ուրութիւն չը կար այլ ճանապարհ լուծելու այդ հարցը. և վերջապէս միթէ բողոքող աշակերտները հրաժարվում են դասից։ Նրանք երբեք խոյս չեն տալիս քննութիւնից. նրանք քննութեան կը գան այն ժամանակ միայն, եթէ նրանց դիւրութիւններ և յարմարութիւններ կը տաք։ Թող հոգաբարձութիւնը հրաժարվի քննութիւնից և միջադէպը քննէ անաչառ մարդկանցից կազմված մի նոր դատարան։ Երբ գործը այն աստիճանին հասցրվեց, որ առանց միջնորդ դատարանի անհնարին է լուծելու այդ խնդիրը, … ժամանակ թող այդպէս անվի. մենք … սեք, որ բողոքող աշակերտութիւնը կը համաձայնի դրան։

Ամբողջ չորս դասարանի աշակերտները դուրս են շպրտված, որոնք պարապ շրջում են փողոցներում։ Չորս դասարան փակված է և … պարապմունքները ժամանակաւորապէս դադարեցված։ Պարոններ, ի նկատի ունեցէք, որ դպրոցական շահը կուսակցական շահերից բարձր պիտի լինի, հետևապէս խնդրի լուծման ժամանակ չը պէտք է կուսակցական շահերով առաջնորդվել…

Մենք շատ նախ պնդել և այժմ էլ պնդում ենք, որ հարկ … է որչափ կարելի է շուտ լուծել այդ խնդիրը։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ձգձգվելը դպրոցի համար բարեբար ազդեցութիւն ունենալ չէ կարող. ուստի յանուն դպրոցական-կրթական մեր միակ հաստատութեան, յանուն ժողովրդական և աշակերտական շահերի, միանգամայն վերջ տուէք միջադէպին, խօմ մինչև մայիս չը պիտի տևի այդ գործի քննութիւնը։

Հասարակութիւնն անհամբեր սպասում է այդ կնճռոտ խնդրի անյապաղ լուծման։ Վերջ տուէք, բաւական է. որքան շուտ, այնքան լաւ...

Ռսկու-Ջօն

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՆԻՍՏԸ

I

Յունվարի 12-ին, երեկոյեան ժամը 7-ին Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում նշանակված էր Հայոց Ազգագրական ընկերութեան հրապարակական նիստը, ուր տեղի էր ունենալու պ. Լէօի «Հայոց գրականութեան զարգացումը XIX-րդ դարում» դասախօսութիւնը։

Նշանակված ժամին արդէն ամբողջ դահլիճը լի էր և գլխաւորապէս՝ Ներսիսեան դպրոցի սաներով։ Տիկիններ, օրիորդներ կանգնած մնացին, միւսները տեղ չը լինելու պատճառով վերադարձան։

7½ ժամին պ. Լէօն սկսեց իր դասախօսութիւնը մի առաջաբանով, որտեղ այն միտքն էր յայտնում, որ մենք գրականական ինքնուրոյն համարեա ոչինչ չենք ունեցել, այլ, ինչպէս այդ տեղի է ունեցել բոլոր ազգերի մէջ, փոխ ենք առել ուրիշներից. մեր գրականութիւնն էլ ենթակայ է եղել պատմական որոշ շրջանների ազդեցութեան։ Գրականութեան ազդեցութեան կամ փոխառութեան օրէնքը մի այնպիսի ընդհանուր օրէնք է, որը ազգերի հանրակեցութեան մէջ մարդկութեան առաջադիմութեան հէնց առաջին քայլերից նկատելի է դառնում և այդ հանգամանքը անպատուաբեր մի երևոյթ չէ և ոչ էլ ստորացուցիչ մի փաստ։ Հելլենները նոյնպէս փոխ են առել սկզբում արևելեան գրականութիւնից՝ բաբելականից, ասորականից, բայց ենթարկել են իրանց հանճարի և ստեղծագործական ոյժի ազդեցութեանը ու ռամկավարացրել նրան։ Այդպիսով ցեղերի, ազգերի հանճարի ստեղծագործութեան արտայայտիչը գրականութիւնն է։

Նոյն երևոյթը մեզանում գլխաւորապէս նկատվում է նոր գրականութեան մէջ, որ իր սկիզբը առնում է 18-րդ դարի երկրորդ կիսից։ Մինչ այդ մեր գրականութիւնը հոգևորականութեան մենաշնորհն էր կազմում, նրա աշխարհահայեացքների ու ձգտումների ստեղծագործութիւնն էր և չէր կարող հասարակական ոյժերի հանճարի արտայայտիչ լինել։ Բայց հէնց որ սկսվեց շփումն աւելի կուլտուրական ազգերի՝ եւրօպացիների հետ, հայ միտքն էլ ենթարկվեց եւրօպական մտքի ձգտումների ու գաղափարների ազդեցութեանը, նոր կեանքի պահանջները զգալի դարձան մեզ համար, հին գրականութիւնը այլ ևս չը գոհացրեց. ահա այդ ժամանակ ծնունդ առաւ ինտելլիգենցիան։

Կուլտուրական երկիրների առաջադէմ ազգերի հետ շփվողները վաճառականներն էին, որոնք 18-րդ դարի երկրորդ կիսից երևան են գալիս Հնդկաստանում և սկիզբն են դնում հայ մամուլին, հայ գրականութեանը և ժողովրդականացնելով աշխատում են ծանօթացնել մեզ նոր կեանքի պահանջների ու եւրօպական գաղափարների հետ։

Սակայն այդ վաճառականական ինտելլիգենցիան շատ թոյլ էր, ղեկավար լինել չէր կարող և մի առանձին հետք էլ չը թողեց։

Հնդկահայերին յաջորդում է Մխիթարեանների դարը։ Իր երկարատև տիրապետութեան ընթացքում Մխիթարեանները, լինելով հայ ժողովրդի միակ դաստիարակիչը, տուել են պատմական, կրօնական, փիլիսոփայական ու գեղարուեստական գրականութիւն, տուել են թատրօն, բայց այդ բոլորը արել են մեծ զգուշութեամբ, խիստ կղերական ոգով, ծածկելով ժողովրդի աչքից Եւրօպայի ազատատենչ, ըմբոստ միտքը, ազատ գաղափարներն ու կարգերը։ Տուել են կլասիք գրականութիւն, պատմուածքներ, բանաստեղծութիւններ, բայց կեղծ ստեղծագործութեամբ, արուեստական, անկեանք և անկենդան։ Հայր Ալիշանն է միայն, որ այդ բոլորի վրա աւելացնում է ժամանակակից հայրենասիրական տենչերը, իր ստեղծագործութեամբ տալիս է հայ կեանքը։ Մխիթարեանների ազդեցութիւնը զօրեղ էր, բայց նրա ուղղութիւնը ստորադրող էր և սահմանափակող. նա թշնամի էր եւրօպական ազատ գաղափարներին։ Սակայն 19-րդ դարի կիսից արդէն բաւականին թւով հայ երիտասարդներ են գնում ուսանելու Եւրօպա և ենթարկվելով նոր կեանքի ազդեցութեանը, անձնատուր են լինում նրա ազատ գաղափարներին և ապա փոխադրվում են հայրենիք և նոր պատգամներով, ազատութեան քարոզներով սկիզբն են դնում հայ կեանքի վերածնութեան։

1839 թւի յուլիսեան յեղափոխութիւնը Պարիզում նոր հոսանք ստեղծեց և նրա ազդեցութեան տակ Պօլսումն էլ սկսվում են զարթումի նշաններ. ըմբոստացող հայ արհեստաւորները, գլխաւորապէս, կռիւ են սկսում ամիրայութեան դէմ, որը, իր կապիտալով ու արտօնեալ դիրքով հայութեան իրաւական մարմինը նեղ պահելով հանդերձ, ամենից աւելի կեղեքում էր հէնց հայ ժողովրդին։ Այդ շարժումը աւելի զօրեղ կերպարանք է ստանում, երբ Ստեփան Ոսկանը, որ առաջնակարգ մասնակցութիւն ունէր 1849 թւի ուսանողական ցոյցերին Պարիզում, վերադառնում է Պօլիս։ Նրա ջանքերով գլխաւորապէս պօլսահայ գրականութեան ու կեանքի մէջ մտնում է նոր ուղղութիւն, սկսվում է տենդային գործունէութիւն հայ մասսայի, մեծ մասամբ գաղթականների մէջ և կազմվում է ինտելլիգենցիա, որը, ժամանակակից ֆրանսիական և անգլիական հասարակական գործիչների … ազատ գաղափարների ազդեցութեան … յափշտակված է ազատատենչ ձգտումներով, իր ձեռքն է առնում ամիրաների դէմ սկսված շարժման ղեկը և վերջնականապէս տապալում նրան։ Ահա այդ շարժման արդիւնքն էր, որ 1860 թւականին թիւրքահայերը ստանում են սահմանադրութիւն. դա արդէն դեմօկրատական ձգտումների յաղթանակն էր։ 1860—1870 թւականների թիւրքահայ գրականութիւնը ներշնչված էր ժողովրդի դրութիւնը բարելաւելու և յեղափոխելու ձգտումներով։ Թիւրքա-

հայ ինտելլիգենցիան այդ ժամանակ տենդային գործունէութիւն է երևան հանում. մի կողմից հնչեցնում է ազատ գաղափարների ջերմ քարոզը և կազմակերպում է հայրենասիրական շարժումը, միւս կողմից՝ զբաղւում է հայ ժողովրդի խնդիրներով, ձեռնարկում է սահմանադրութեան իրականացման։ Ժողովրդի մէջ երևան են գալիս զարթնումի նշաններ. բռնկւում է Զէյթունի շարժումը, որից յետոյ օսմանեան կառավարութիւնը ձեռք է առնում իր խստութիւնները, սահմանափակւում է սահմանադրութիւնը, առաջ է գալիս ռեակցիա և երկրի տարտամ վիճակը մնում է դարձեալ անփոփոխ։ Մինչև 1861 թւականը Թիւրքահայերի մէջ նկատւում էր երկու տրամադրութիւն. այն ժամանակ, երբ Պոլսի հայերը Անգլիայի և Ֆրանսիայի ազդեցութեան տակ էին, և ատում էին ռուսներին, հայկական գաւառները, ընդհակառակը, բոլորովին անկախ պօլսեցիներից, ձգտում էին դէպի մօտիկ քրիստոնեայ պետութիւնը՝ ռուսները։ Սակայն սահմանադրութիւնը ստանալուց յետոյ 1861 թւին պօլսահայ ինտելլիգենցիային աջողւում է ղեկավարող դեր խաղալ գաւառներում և զբաղվել հայ գիւղացու ցաւերով։ Այդ ժամանակ հայ գիւղացին հողազուրկ էր և ճորտ, իսկ քրդերը, որ ներկայանում էին իբրև մի ազգային անկախ իշխանութիւն, հողի տէրերն էին և ոչ միայն ճորտութեան, սարկութեան մէջ էին պահում հայ գիւղացուն, այլ և ձգտում էին ապահովել ճորտութիւնը և բազմացնել նրան՝ խառնվելով հայի ամուսնական, ընտանեկան գործերի մէջ։ Այդ դրութեանը վերջ տալու համար Թէև սուլթան Մէջիդը մի հրովարտակ հրատարակեց, որով հրամայւում էր հողը վերադարձնել աշխատաւոր գիւղացուն, բայց քիւրդ բէգերը ձեռք չէին քաշում իրանց տիրապետութիւնից և կառավարութիւնն էլ այդ հրատարակած օրէնքը, որ միայն եւրոպական դիպլոմատիայի աչքին թոզ փչելու համար էր, իրագործելու մասին չէր էլ մտածում։ 1878 թւին Բեռլինի այդ դրութեան մասին հայ ժողովուրդը պատրիարքի միջոցով բարձրացրեց իր բողոքը, որը նոյնպէս անհետևանք անցաւ։ Այդ ժամանակամիջոցում մամուլը հարկադրված էր միայն շարունակել գաւառական փաստերի արձանագրութիւնը։ Գիւղացու վիճակը սկսեց սարսափելի վատթարանալ, երկրի մէջ ծայրայեղ բռնութիւններ էին կատարւում։ Հայ ինտելլիգենցիան նորից սկսեց զբաղվել հայ ժողովրդի դրութեամբ, հայ գիւղացու հարցով և նրա բարելաւութեան համար այդ ժամանակ սկսւում են հայ ինտելլիգենցիայի երկու հակառակ հոսանքներ՝ Արևելեան և Արևմտեան (ռուսահայ և Թիւրքահայ)։

Թիւրքահայ ուղղութիւնը կամ Արևմտեանը հակառուսական ուղղութիւնն էր, որ գործում էր Եւրոպայի ազդեցութեան տակ։ Ռուսատեացութիւնը հետևանք էր այն համոզմունքի, որ Ռուսաստանը դէմ էր ազատագրական շարժման, կեանքի նոր կարգերի ու ազատ գաղափարների։ Այդ համոզմունքն էլ անցաւ հայերի մէջ։ Ահա թէ ինչու պօլսահայ ինտելլիգենցիան դէմ էր ռուսական տիրապետութեան, նրա արած նուաճումներին (այդ ուղղութեան ղեկավարն էր յայտնի Ստեփան Ոսկանը) և, պարզ բան է, նա իր յոյսը դնում էր միայն Արևմտեան պետութիւնների վրա, եթէ հարկ էր լինում արտաքին քաղաքական ոյժի։ Իսկապէս պօլսահայ ինտելլիգենցիան հայ գիւղացու հարցը համարում էր օսմանեան պետութեան ներքին հարց միայն և փորձում էր նրա հետ ընթանալ համերաշխութեամբ։

Մինչդեռ ինքը Ռուսաստանը ռուս-Թիւրքական վերջին պատերազմներից սկսած ամեն կերպ ձգտում էր իր կողմը գրաւել հայ ժողովրդի համակրութիւնը և այդ նպատակով էլ աշխատում է կապ ստեղծել ռուսահայերի և Թիւրքահայերի միջև. Գէորգ կաթողիկոսի օրով, և կոմս Իգնատիէվի ջանքերով՝ ջանում է հիմնել Պոլսում Էջմիածնի անունով մի դպրոց, սակայն այդ բոլոր փորձերը անաջող անցան։

Մինչ այդ ռուսահայերի մէջ առաջ են գալիս ազատագրական ձգտումներ. կովկասահայ գրականութեան մէջ սկսւում է բոլորովին նոր ուղղութիւն, ժողովրդական կեանքից առած և ազատ գաղափարներ սերմանող ուղղութիւն։ Կազմւում է ինտելլիգենցիայի մի խումբ, որ սլաւօնական ձգտումների, ազգերի ազատութեան և աբսօլիւտիզմը տապալելու գաղափարներով ոգևորված սկսում է մտածել Թիւրքահայ եղբայրներին մահմեդական լծից ազատելու մասին։ Միքայէլ Նալբանդեանը շփվելով այն ժամանակվայ ռուս յայտնի յեղափոխական գործիչների հետ՝ Հերցէնի, Չերնիշեվսկու, Բակունինի, Օգարեւի նոյնպէս և Գարիբալդիի, Մածինիի հետ, նրանց հետ միասին ծրագիրներ է կազմում ապագայ գործունէութեան համար և կապ է ստեղծում Թիւրքահայ երիտասարդութեան և Սլաւեանի հետ, և ռուսաց յեղափոխական մտքի ազդեցութեան տակ կազմակերպվում է մի յեղափոխական ծրագիր։ Այդ շարժումը Ռուսաստանում աւելի զօրեղացաւ Գ. Արծրունու, Րաֆֆու-Բաթիպայի և Րաֆֆիի ժամանակ և նրանք էին, որ իրանց գրչով տարածում էին ռուսաց հայեացքները։ «Մշակի» սկսած կռւկռտ քարոզները հայ ժողովրդի դատի համար այնուամենայնիւ հակառակ հոսանք է առաջացնում պօլսահայերի ղեկավարող շրջաններում, որովհետև օսմանեան տէրութեան հետ համերաշխ ընթանալու ուղղութիւնը դեռ ևս շարունակւում էր, և 1876 թւականի վերջերում Թիւրքահայերի և ռուսահայերի հակառակ ուղղութիւնը նկատւում էր այնքան ռելիէֆ, որպիսին երբեք չէր եղել։ Սակայն վերջին ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ Արևմտեան այդ ուղղութիւնը կանգ առաւ, Թիւրքիայի գոյութեանը սպառնացող վտանգը ուշքի բերեց նրանց ղեկավարներին. նրանք հասկացան իրանց սխալ քայլը, զգացին, որ Թիւրքերի հետ համերաշխել չէ կարելի, որովհետև նրանք համերաշխութիւնը ընդունում են օսմանեան ընդհանուր կրօնի հիման վրա միայն. և ահա վճռվեց առանձին հայկական հարց դնել եւրոպական պետութիւնների դիւանի առաջ։ Այդ հանգամանքին շատ նպաստեց ու դրդեց հէնց ինքը Թիւրք կառավարութիւնը։ Դա հոգեվարքի մէջ ընկած Թիւրքիայի վերջին ճիգն էր իր անկման առաջն առնելու համար։ Ահա այդպիսով ստեղծվեց 61-րդ յօդուածը։

Այդպիսով, ինչպէս նկատում ենք, հայկական հարցի հէնց երկունքի օրերում մերձեցումն է տեղի ունենում Թիւրքահայերի և ռուսահայերի միջև, և Թիւրքահայ ղեկավարները ընդունում են ռուսահայերի քաղաքական ուղղութիւնը, որ աւելի էր համապատասխան իրերի դրութեան։ Վերջին ռուս-Թիւրքական պատերազմից յետոյ ռուսահայ գրականութիւնը, գլխաւորապէս «Մշակը», իրանց ազդեցութիւնը տարածեցին Պոլսի հայ ինտելլիգենցիայի վրա և ֆրանսիական ռոմանտիկութիւնը տեղի տուեց հայկական կեանքի իրականութիւնից բղխող գրականութեան։ Դրական այդ ազատ ուղղութիւնը սակայն երկար չը տևեց. Թէ Թիւրքիայում և թէ Ռուսաստանում սկսվեցին ռեակցիաները և ռեակցիան իր կնիքը դրեց հայ կեանքի ամեն մի երևոյթի վրա, գրականութիւնը դարձրեց անկենսունակ, ժամանակի խաղալիք։ Հայկ. վերջին կոտորածները նորից ցնցեցին հայ գրողներին և հայ ժողովրդի ցաւերը նորից արտայայտութիւն ստացան՝ գլխաւորապէս Ահարոնեանի գրուածքներում։ Թիւրքահայ ժողովրդի մռայլ պատկերը ճնշեց Թիւրքահայ գրականութիւնը և խիստ կերպով ազդեց հայրենիքից հեռու գտնվող նրա ոյժերի վրա։

Այդ մռայլ կացութեան մէջ բոլորում է Թիւրքահայ գրականութիւնը և կեանքը, և ոտք է դնում քսաներորդ դարը։

Դրանով էլ վերջացրեց դասախօսը իր դասախօսութիւնը և վարձատրվեց ծափահարութիւններով։

Ժամի 10-ին ժողովը ցրվեց։

Լ. Դ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մոսկվա, դեկտեմբերի 23-ին

Երէկ, ամսիս 22-ին «Որսորդական կլուբի» դահլիճում կայացաւ տեղիս հայ կանանց մասնախմբի ներկայացումը։ Դահլիճը լիքն էր հայ և մասամբ օտարազգի հասարակութեամբ։

Ներկայացնում էին հայ սիրողները «Պատուի համար» Շիրվանզադէի դրաման, ղեկավարութեամբ Մոսկվայի գեղարուեստական թատրոնի դերասան պ. Բուրջալեանի, և երկու կատակերգութիւն ռուսերէն լեզւով.—«Гастролерша» և «Юбилей»։ Սիրողների հայերէն ներկայացումը պ. Բուրջալեանի հմուտ և ժրաջան աշխատութեան շնորհիւ անցաւ շատ աջող և Թողեց լաւ տպաւորութիւն հանդիսականների վրա։ Լաւ էր նոյնպէս Չէխովի «Юбилей»-ը։

Բարեկաջող անսամբլի մէջ իրանց պատրաստված խաղով աչքի էին ընկնում օր. Ս. և պ. Դ. Աբիսողոմեանները, օրիորդներ՝ Դիլդարեան, Ն. Ե., Ն. Շոշորեան, Տէր-Յակոբեան և Պարոնիկեանները, նոյնպէս պ. պ. Սահարբէկեան ու Խ. և Լ. Խալաթեանցները։

Կանանց մասնախմբի գործունէութիւնը այս վեցերորդ տարին է, որ աջողութեամբ շարունակւում է և տալիս է ամեն տարի հայերէն ներկայացումներ Մոսկվայում։ Անդամավճարներից, ներկայացումներից և նուիրատուութիւններից գոյացած արդիւնքով մասնախումբը օգնում է բացառապէս տեղս գտնված չքաւոր հայ ուսանողուհիներին, որոնք գալիս են զանազան կողմերից բարձրագոյն կրթութիւն ստանալու։ Ցանկանալով աջողութիւն յարգելի տիկինների գործունէութեան, ցաւելով պէտք է յիշենք, որ ուսանողներն և ուսանողուհիները հայկական ներկայացումների վրա ըստ երևոյթին նայում են ինչպէս մի փող ժողովելու միջոցի վրա և իրանց հեռու են պահում հէնց իրանց օգտին տուած ներկայացումներից։ Ինչով բացատրել։

Ա. Կ.

—

Մերվ, յունվարի 10-ին

Երեկոյշաբթի, ամսիս 8-ին տեղիս թատերասէրները, հասարակական դահլիճում, յօգուտ Մերվի կանանց Բարեգործական ընկերութեան, խաղացին Սունդուկեանի «Պէպօն» 3 գործողութեամբ և Ղազարեանի «Եաղ Աստ» վօդևիլը 1 գործողութեամբ և 2 պատկերով։ Դահլիճը համարեա թէ լիքն էր հանդիսականներով. առաջին գործողութեան մէջ աթոռների ճռռոց-չըռըկոցից չէր լսվում դերակատարների արտասանութիւնները, միայն երկրորդ գործողութեան ժամանակ փոքր ինչ դահլիճը հանդարտվեց։ Խաղը անցաւ բաւարար, շնորհիւ սիրողների աջակցութեան։ Մասնակցում էին պ. պ. Յովհաննիսեան, Յովսէփեան, Գէորգեան, Կոստանդեան, Ապրէսեան. տ. տ. Մելիք-Ասլանեան, Հայրապետեան և օր. Միրզոյեան։ Վօդևիլում պ. Գէորգեանը «Մաթոսի» դերը կատարեց աջողութեամբ, որև մեծ զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։ Անտրակտներում նուագում էր ասիական սազանդարը։ Ներկայացումը վերջացաւ ժամը 1-ին, որից յետոյ հանդիսականները գոհ սըրտով ցրվեցին տները։

Մանասէ

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ախալցխա, յունվարի 11-ին

Այն խղճուկ իրականութիւնը, որ ինչպէս Թագաւորում է մեր շատ գաւառներում, այն Թշուառութիւնն ու աղքատութիւնը, որ ինչպէս ցայտուն կերպով երևան է գալիս մեր մի շարք գիւղերում ու քաղաքներում, նոյնպէս և իր մահացուցիչ, վնասակար ու խեղդող ճիրանները այսօր սփռել, ներս է խոթել մեր հայրենիքում՝ Ախալցխայում։ Ախալցխան չը գտնվելով մի վաճառաշահ հաղորդակցութեան մեծ ճանապարհի վրա, չունենալով յարաբերութեան ընտիր ու արգասաւոր միջոցներ, ինչպիսին է երկաթուղին, ծովը կամ նաւարկելի գետը, ամբողջապէս մատնված է բաղդի ու անողոք ճակատագրի կործանիչ հարուածներին։ Ախալցխացին ստիպված է շատ անգամ թողնել իր հայրենիքը, նրա անգնահատելի օդն ու ջուրը, գեղածիծաղ բնութիւնը իր հրաշալիքներով և պանդխտութեան գնալ հեռու հիւսիս, սառնամանիքների ու յարատև բորանների աշխարհը, ճարելու համար մի կտոր չոր հաց, որ այնտեղ, սովալլուկ հայրենիքում, ապրի նրա ընտանիքը, նրա սուրբ, անմոռանալի և ամենից բարձր օճախը, հայրենի տունը, որովհետև այդ բոլորը գերադասելի է նրա համար ամեն ինչից և նա նախանձախնդիր է դրանում։ Եւ այսպիսով կամաց-կամաց նրանից բաժանվում, ամ ջատվում են նրա կենսունակ, երիտասարդ ոյժերը, ծաղիկ կեանքերը, նորափթիթ և շատ բան խոստացող ջահէլները, ապրելով օտար հորիզոնների տակ։

Ներկայումս Ռուսաստանի շատ քաղաքներում, մինչև Մանջուրիայի անապատներում, Դաղեստանում և Կովկասի շատ վայրերում դուք կարող էք տեսնել այդ գաղթականներին, երբեմն մենակ, երբեմն էլ ընտանիքով։ Ախալցխան արտադրել է շատ ընտիր ոյժեր, ինտելլիգենտներ, բժիշկներ, ինժեներներ, բարձրագոյն կրթութեան շատ անհատներ, բայց դրանցից ոչ մէկը չէ նուիրվել իր ծննդավայրին, որովհետև նրանք բոլորն էլ վազել են միշտ դէպի սալօնները, որովհետև նրանք որոնել են այն տեղերը, որտեղ ոսկին է շըռռում ու անբարոյականացնող նկատառը իր խրախճանքները կատարում։ Իսկ եթէ Ախալցխայում աղքատութիւնն ու տգիտութիւնն է իշխում, այդ նրանց համար ոչինչ, քանի որ նրանք մի թեթև արհամարհանքով երես են դարձնում նրանից։

Եւ այդ պատճառով խեղճ ու կրակ ախալցխացին, քրտինքի ու տանջանքի զաւակ աշխատաւորն այսօր տառապում, շահագործվում է մի քանի վաշխառուների սուր-սուր ճանկերում, Թշուառութեան յղփացած բազուկներում։ Այդ հոգ չէ վաշխառուների համար, քանի որ ոսկու փայլը կուրցրել է ամեն ինչ, և՛ խիղճ, և՛ արդարութիւն։

Թէ ինչ է արտահանում Ախալցխան, շատ հետաքրքիր է։ Այն ամբողջ արդիւնքը, որ նա մեծ դժուարութիւններով շուկայ է հանում, միրգն է, տանձը և խնձորը, որ շատ յաճախ նպատակին չը հասած անպէտքանում, փտում է. չնչին քանակով արտադրվում է նոյնպէս կարտոֆել և նորերս սկսած փայտը, որը ապագայում մեծ յոյսեր է խոստանում, որովհետև Ախալցխան մօտիկ է անտառներին։ Սրանք ևս շնորհիւ մի շարք բարդութիւնների, չնչին եկամուտ են բաշխում։ Ահա այս է տեղիս ցաւալի վիճակը։

Արտ. Վանցեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Քարվանսարա, յունվարի 10-ին

Նոր կարգադրութեամբ պէտք է գիւղական հասարակութիւնները նախկին եղանակով ընտրեն ծառայողներ՝ տանուտէր, դատաւորներ, օգնականներ և այլն, միայն ձրի. երեք կառավարութիւնն ըմբռնեց, որ 8—10 գիւղեր միմեանցից տասնեակ վերստերով հեռու, անյարմար էր ի մի ձուլել և փաթեթել դրանց շինքերն համարեա նշանակալի կամ կիսաընտրովի ռոճիկով տանուտէրեր, որոնք, ինչպէս փորձը ցոյց տուեց, ոչինչով չը կարողացան օգտակար հանդիսանալ, չը նայելով կանոնաւոր ռոճիկներ ստանալուն։ Մենք այս առթիւ երբեք կողմնակից չենք ձրի ծառայութեան կոչել անկաշառ, եռանդոտ և գործունեայ երիտասարդ տարրերին, որոնք անձնուրաց ծառայելու փափագ ունեն գիւղական հասարակութիւններին. բայց ոչ մի կերպ համաձայն էլ չենք կապել 10—15 վերստով հեռու գիւղեր և օրերով տնից տեղից զրկված գիւղացուն տեսնել մաշելիս կենտրոնում նըստած տանուտէրի կամ դատաւորների շէմքերը։ Օրինակ Քարվանսարա էին գալիս 5 դատաւոր, որոնցից մէկը յոյն, որը ոչ լեզուն էր հասկանում, ոչ խօսում... մի օրով ճանապարհ գալուց յետոյ։ Գիւղացիք մեծ ուրախութեամբ ընդունեցին նախկին եղանակով գիւղական հասարակութիւններ կազմելը և ձրի տանուտէր ընտրելը, որովհետև սովը և կարիքները գիւղացուն խպառ քայքայել են, և շատերը գլուխները կորցրել էին։

Ի հարկէ, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ շատերը գլուխները սրել, մէջտեղ էին մտել Մութ անձնաւորութիւններ ամիսներ առաջ «գործում» էին մի արատաւորված անձնաւորութեան համար, որ տանուտէր չինեն. ասում էին, որ միայն գինի և օղի սրան նրան խմացնելու վրա ծախսել է 60 րուբլի։ Սակայն հասարակութեան բանիմաց մասը, որ գիտէ հասարակական շահերը գերադասել անձնականից, որ գիտէ լոյսը ջոկել խաւարից, որը կուլտուրական մեծ ոյժ է կազմում և որի անդամները միմեանց հետ կապված են գաղափարական յարաբերութիւններով, առաջ եկան և այնպիսի ապտակ տուին յետադէմ և խաւարամիտ խուլիգանական խմբին, որ պատիւ բերեց Թէ գիւղին և Թէ իրանց։

Ամսիս 8-ին կատարվեց Քարվանսարայի և Վերին Աղդանի համար տանուտէրի ընտրութիւն եռամեայ ժամանակով։ Ժողովը բացեց ընտրութիւնները ղեկավարող հաշտարար միջնորդ իշխ. Ճաւճաւաձէն, որը, ի դէպ է ասել, գովելի անաչառութեամբ և համբերութեամբ Թոյլ տուեց, որ ժողովուրդը ազատ, առանց ճնշման ընտրէ իր ցանկացածին։ Իշխանը նախ բացատրեց ժողովրդին ժողովի նպատակը, նոր կարգադրութիւնը և հրաւիրեց ընտրել ազնիւ, անկաշառ և գործունեայ անձնաւորութիւններ։ Իշխանի գեղեցիկ և հայկական խօսքերը նրա թարգմանը շատ անհոռքեք կերպով էր մեկնում։

Իշխանի պատուէրով բերվեց երկու արկղ և ժամը 12-ից մինչև 4-ը լոյսի և խաւարի մէջ կատաղի կռիւ էր մղվում. Քուէարկութեան հետևանքը այս էր. գիտակից մասի արժանաւոր ընտրելին՝ պ. Ան. Պապեանը ստացաւ 87 ձայն։ Այսպիսով Քարվանսարայի և Վերին Աղդանի տանուտէր ընտրված համարվեց գիւղիս երկդասեան դպրոցը աւարտած, զարգացած, գործունեայ և եռանդոտ երիտասարդ Ա. Պապեանը։

Հետևեալ առաւօտը խաւարի որդիքը ցանկացան գոնէ կանդիտատ ընտրել տալ իրանց ընտրելի Ս. Յ. ին, բայց առաջարկվածներից Ա. Նազարեանցը ստացաւ 130 ձայն, իսկ Ս. Յարութիւնեան 10 ձայն։

Դատաւորներ ընտրվեցին ուղղակի և միաձայն՝ պ. պ. Սող. Բէգնազարեանց, Ա. Թ. Մելիքսեդեանց և Ալ. Գանջինեանց։

Նշանակալից խօսքերը ազդրանեցի մի ծերունու անհրաժեշտ եմ համարում արձանագրել. նա Ա. Պապեանցի քուէտուփին մօտեցաւ և ասաց. «Աստուած շնորհաւոր անի լոյսի յաղթութիւնը»։ Այսպիսի աջող ընտրութիւն շատ քիչ էր տեսել մեր գիւղը։ Մենք մեր կողմից շնորհաւորում ենք այս ընտրութիւնը։

Ապա կայացաւ Խաչթառակի հասարակութեան ընտրութիւնը։ Տանուտէր ընտրվեց Շ. Սարհադեանցը 135 ձայնով, իսկ մի քանի անգամ քուէարկութիւն արած Ն. Ամիրաղեանը ստացաւ 33 ձայն։

Դատաւորներ՝ Գրիգոր Սեւադեան, Մ. Մկրտումեան և Ս. Բայրամեան։ Բոլորն էլ նոր մարդիկ են։

Մի խորհուրդ ժողովրդին։ Ընտրութիւնների ժամանակ չը խաբվել գինուց, արաղից, և ոչ էլ «պոլոտէներից», որոնց լեզուն ուրիշ է, գործերը ուրիշ. մի մօտենաք նրանց, որոնցից վերջումը խոստ Թափել չի լինում։

Եղանակները գարնանային էին. նոյն իսկ յորդ անձրևներ տեսանք դեկտեմբերին։ Երկու օր է ինչ առատ ձիւն է եկել։ Սովը անասելի հիւանդութիւններ պիտի առաջացնի մեր գաւառում։ Մասնաժողովը չէ կարողանում բաւականութիւն տալ հաց խնդրողներին. դիմել են Ցանձնաժողովի շուտափոյթ օգնութեան։

Պէծ

ԹՈՒՐՐՄԱՑՈՒԹԻՒՆԸ ՑՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Նամակ խմբագրութեան)

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով յայտնել ի գիտութիւն հասարակութեան հետևեալը.

Ամսիս 14-ին կայացած դասախօսութեան ընթացքում միանգամայն անհնար դարձաւ ժամանակի սղութեան պատճառով բաւականաչափ կանգ առնել և ըստ էութեան բացատրել ծրագրածս բոլոր Թէզիսները, որոնցից մի քանիսի մասին նոյն իսկ խօսք չեղաւ։ Այս իսկ պատճառով ես նպատակայարմար ճանաչեցի սարքել երկրորդ դասախօսութիւն և աշխատել գիտականաբար բացատրել ու պարզել նախ՝ բոլոր այն կէտերը իմ ընտրած նիւթի, որոնք այսպէս Թէ այնպէս կարող էին մութ մնացած լինել հասարակութիւնից շատերի համար, և ապա դրանից զատ, առանձնապէս ու մասնաւորապէս կանգ առնել այնպիսի կէտերի վրա, որոնք կարդինալ նշանակութիւն ունեն Թէ հասարակական խնդիրների ու նրանց այս կամ այն կերպ լուծելու վերաբերութեամբ և Թէ զուտ գիտական պրինցիպների պաշտպանութեան և շահերի տեսակէտով։ Համաձայն այդ բանի կայանալի իմ երկրորդ դասախօսութեան համար ես ընտրած էի հետևեալ անհրաժեշտ Թէզիսներն ու նրանց պաշտպանութիւնը.—

1) Հոգեբանական ներածութիւն։

2) Նորմատիվ էթիկայի պատմական տենդենցը և նրա հասարակական-մտաւորական կրթիչ դերը։

3) Օրէնսդրական քաղաքականութեան բանական հիմքերն և պատմական նշանակութիւնը։

4) Գիտական մէթոդոլոգիայի ընդհանուր գծերն և տրամաբանական պահանջները։

5) Մարքս-էնգէլսեան մաթէրիալիստական վարդապետութեան և նրա տարբեր ճիւղաւորութիւնների հիմնական մէթոդօլօգիական սխալներն ու Թիւրիմացութիւնները։

6) Սեպհականութեան իրաւունքը, հասարակական դիստրիբուտիվ (բաժանողական) երևոյթները, այսպէս կոչված «կապիտալիստական կազմը» և նրանց պատմա-հոգեբանական էութիւնը։

7) Ազատութեան գաղափարը և հասարակական արդարութիւն կոչվող երևոյթի հոգեբանական էութիւնը։

8) Գենէզիսների խնդիրը և նրա մօտաւոր լուծումը։

9) Հասարակական արժէքների ծագումն ու զարգացումը.

ա) Դարվինիզմ.

բ) Անհատական-հոգեբանական (էմօցիօնալ-ինդիկտիվ) յարմարեցում.

գ) Լինգվիստիկա, նրա ծագումն ու էվօլիւցիօնալ դերը գենէզիսների խնդրում,

դ) Հասարակական-հոգեբանական յարմարեցում (процессъ соціально-психическаго приспособленія)։

10) Վերջաբան. սօցիալիստական իդէալների դրական իրականացման գիտական հնարաւորութիւնն ու հոգեբանական արժէքը։

Սակայն դժբախտաբար վերոյիշեալ մտադրութիւնս, ինչպէս երևում է, անհնար է այլ ևս իրագործել։ Այսօր, յունվարի 16-ին Թիֆլիսի նահանգապետի դիւանատանը ինձ յայտնեցին, որ նահանգապետը անյարմար և անհնարին է գտնում Թոյլատրել դասախօսութեան շարունակութիւնը միայն այն պատճառով, որ անցեալ անգամ (յունվարի 14-ին) դասախօսութիւնից յետոյ տեղի են ունեցել վիճաբանութիւններ, որոնք չը պէտք է տեղի ունենային։ Ուրեմն nolens-volens ես ստիպված եմ հրաժարվել երկրորդ դասախօսութեան մտքից։

Սակայն մի հանգամանք ինձ դրդում է սոյն տողերովս յայտնել հասարակութեան մի բան, որի մութ մնալը կարող է մեծ հեշտութեամբ Թիւրիմացութիւնների տեղիք տալ։

Իմ ընտրած ու պաշտպանած նիւթը այնքան էր նոր և օրիգինալ (թող այս խօսքը չը վերագրեն տողերիս հեղինակի ինքնահաւանութեան), որ անհնարին էր միանգամայն պարզ և մատչելի կերպով բացատրել ընտրածս տեսակէտները, մանաւանդ որ ամբողջ գրականութեան մէջ անկարելի է գտնել նման տեսակէտներ ու հոգեբանական մեկնութիւններ, ուստի ենթադրում եմ ես, որ շատ շատերի համար մութ մնացին իմ հայեացքներն ու տեսակէտները։ Հեռուն չը գնամ խօսեմ «Մշակի» իսկ Թղթակցի ցոյց տուած ապաւորութեան մասին, որը հիմնված է Թիւրիմացութեան վրա։ Յարգելի Թղթակիցը միանգամայն չէ իւրացրել այն տեսակէտները, որոնց ես պաշտպանում էի, սակայն մեղաւորը այս դէպքում ես չեմ, այլ գիտութեան ներկայ վիճակն ու կուլտուրական արդի դրութիւնը. որպէս զի գիտութեան որոշ տեսակի պրինցիպները ժողովրդականանան, հարկաւոր է երկու գլխաւոր պայման. ա) անհրաժեշտ է, որ դոյն գիտական պրինցիպները տարիների, տասնեակ տարիների ընթացքում բացատրվեն, մեկնաբանվեն, զտվեն և մատչելի դառնան ժողովրդի լայն խաւերի համար, հարկաւոր է որ գիտութեան ասպարեզից դուրս եկած խօսքը ճկունանայ, ամրանայ ու դառնայ հասարակութեան մէջ շրջագործվող դրամ, ակցիա, նման բորսայական ակցիաներին իսկ դրա համար հարկաւոր են տարիներ, տասնեակ տարիներ. բ) անհրաժեշտ է, որ ինքը ժողովուրդը հասած լինի՝ գիտական խօսքը, ճշմարտութիւնը իւրացնելու կուլտուրական համապատասխան աստիճանի։ Ներկայ դէպքում երկու պայմաններն էլ բացակայ են, ուստի մեծ հող և հնարաւորութիւն կայ ապաւաղումների և Թիւրիմացութիւնների համար։

Ի նկատի առնելով այս ամենը, ես անհրաժեշտ եմ համարում հրապարակօրէն յայտնել հետևեալը.

Իմ դասախօսութեան առաջին և հիմնական կէտն էր ցոյց տալ ժամանակակից հոգեբանութեան տխուր վիճակը և առանձնապէս շեշտել այն, որ մարդկային բոլոր վարմունքները միանգամայն չեն կարող բացատրվել զուտ հէդօնիստական և տէլէօլօգիկ (նպատակայարմարութեան և ուտիլիտար) մօտիվներով, և որ կան և գոյութիւն ունեն ստուար քանակութեամբ սկզբունքային, պրինցիպիալ մօտիվներ, որոնցով պայմանաւորվում են ըստ մեծի մասին մարդկային-հասարակական վարվեցողութիւնները։

Արդ, զուտ սկզբունքային և զանազան շահաւիրական, հէդօնիստական և այլ օպպորտիւնիստ մօտիվներից անկախ գոյութիւն ունեցող պրինցիպիալ (самодавлѣющіе мотивы) մօտիվների շրջանում մենք տարբերում ենք՝ ա) էսթէթիկական մօտիվներ (որոնց հետևանքը պիտի համարել այսպէս կոչված regulae teeori) և բ) էտիկական մօտիվներ։ Իսկ էտիկական մօտիվները, որոնք իրանցից ըստ ինքեան ոչ այլ ինչ են, եթէ ոչ զուտ հոգեբանական արժէքները (մինչդեռ ժամանակակից հասարակագիտութիւնը և նրա տարբեր ճիւղերը էտիկական երևոյթները որոնում են արտաքին աշխարհում, տարածութեան մէջ, մարդկանց վերև, ներքև և այլն) իրանց հերթին բաժանվում են՝ ա) զուտ իմպերատիվ, միակողմանի նորմերի, որոնք և կազմում են բարոյականութիւնն ու քրիստոնէական մորալի քվինտէսէնցիան։ Այս զուտ իմպերատիվ նորմերը գործ ունեն միայն պարտաւորութիւնների հետ. նրանք մեզ պարտաւորեցնում են մի բան անել (facere) չանել (non facere), կամ համբերել, տանել (pati), առանց սակայն պահանջի իրաւունք տալու մի երրորդի, որ նա կարողանայ մեզանից պահանջել, որ մենք բարի, մարդասէր լինենք, որ մենք ողորմութիւն տանք և այլն... և բ) իմպերատիվ-ատտրիբուտիվ, հրամայական-պահանջողական նորմերի, որոնք են իրաւական նորմերը, և որոնք մէկին պարտաւորեցնում են (imperare), իսկ միւսին տալիս են համապատասխան պահանջի իրաւունք, եթէ մէկը մի բան պիտի անէ (facere), մի ուրիշը այդ նոյն բանը պէտք է ստանայ (accipere). եթէ մէկը մի բան պիտի չանէ (non facere), մի ուրիշը իրաւունք ունի պահանջելու, որ այդ բանը չանվի, չը կատարվի. եթէ մէկը պարտաւոր է մի բան համբերել, տանել (pati), մի ուրիշը իրաւունք ունի որոշ տեսակի վարմունքներ անել, կատարել (այսպէս օրինակ սահմանադրական ազատութիւնները. քաղաքացիները իրաւունք ունեն ազատ ժողովվելու, ազատ խօսելու, իսկ կառավարութիւնը պարտաւոր է այդ համբերել, տանել)։ Ուրեմն զուտ իմպերատիվ, բարոյական դրդումները, մօտիվները գիտեն և գործ ունեն միայն պարտաւորութեան տէրերի (субъекты обязанности) հետ, մինչդեռ իրաւական, իմպէրատիվ-ատտրիբուտիվ նորմերը գործ ունեն մի կողմից պարտաւորութեանց տէրերի (субъекты обязанности), միւս կողմից իրաւունքի, պահանջումների տէրերի (субъекты правъ) հետ։

Իմ դասախօսութեան այս կէտը ես բաւականաչափ պարզված էի համարում. իսկ եթէ եղան մարդիկ, որոնք դիտմամբ ապաւաղեցին իմ ասածները, մեղադրանքը ընկնում է նրանց՝ իրանց վրա։

Իսկ ինչ վերաբերում է այն խնդրին, որ ես փոխանակ «Նորմատիվ էտիկան սօցիալիստների և անարխիստների դատաստանի առաջ», ճիշտը ասած՝ կարդացի «սօցիալիզմը իմ դատաստանի առաջ»—ես այդքանը կասեմ միայն։ Զարմանալի դատապարտելի է այն դատաւորը, որը դեռ չը պարզած իր առաջ կանգնած մեղադրեալի ով կամ ինչ (լինում են այնպիսի մարդիկ, որոնց մասին կարելի է գործադրել ինչ հարցը, ռմ-ի փոխ.) լինելը, գլխից սկսում է քննել գործը։ Նախ և առաջ հարկաւոր է որոշել մեղադրեալի անձնաւորութիւնը (установленіе личности) և ապա քննել գործը։ Եւ այդպէս սխալ վարված կը լինէի ես, եթէ առանց էտիկայի հոգեբանական էութիւնը որոշելու, սկսէի զբաղվել սօցիալիստների վերաբերմունքով դէպի էտիկան։

Իսկ ինչ վերաբերում է իմ յայտնած այն կարծիքին, որ սօցիալական մատերիալիզմը գիտական ռէակցիօն շարժում է, ես պատրաստ եմ այդ նոյն կարծիքը հրապարակով կրկնելու և բացատրութիւն տալու այն մարդկանց, որոնք հարկաւոր կը համարեն բացատրութիւն պահանջելու։

Իսկ Կաուցկուն ես անուանում եմ մի որևէ Կաուցկի. դարձեալ գիտութեան շահերի տեսակէտից։ Իմ խոր համոզմունքով Կաուցկու արժանիքը հարկաւոր է որոնել միայն այսպէս ասած բօրսայական տրամադրիչ կարծիքներ ու հայեացքներ մշակելու և տարածելու մէջ, (въ разработкѣ биржевыхъ взглядовъ) իսկ այդօրինակ բօրսայի ապրանքները գիտական նշանակութիւն չը պէտք է ունենան։ Եւ եթէ այսօր գիտական են կոչվում միայն այդպիսիները, դա արդիւնք է հասարակական մտածողութեան այլասերմանն ու դեգեներացիայի։

Հ. Համբարձումեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ղարաքիլիսէ, 8 յունվարի

Մենք ի ներքոյ ստորագրող մի խումբ ճանապարհորդներս Երևանից Թիֆլիս էինք վերադառնում № 76 գնացքով։ Ուղևորելու կայարանում մեր ընկերներից մէկի վերմակը մի խումբ սրիկաներ գողացան։ № 171 վագոնի ճանապարհորդներս շատ փնտրեցինք, դիմեցինք կօնդուկտօրին, բայց անհետևանք անցաւ։ Գնացքը հասաւ Կօլը կայարանը։ Կօլըից գընացքը շարժվեց և դէպի Ղարա-Քիլիսէն տանող ճանապարհին գողացան մի ճանապարհորդի վերարկուն ևս։

Մի քանի ինտելլիգենտ պարոններ տեսնելով որ գնացքի վարչութիւնը անտարբեր է վերաբերվում սրիկաների բռնած ընթացքին, իրանց վրա առան կորած իրերը գտնելու նեղութիւնը։ Մի պարոնի՝ Գէորգ Խաչատուրեանցի շնորհիւ յայտնի եղաւ Թէ ով է վերցրել վերարկուն։ Երբ հասանք Ղարա-Քիլիսէի կայարանը, 10 հոգի մասերի բաժանվեցինք և սկսեցինք որոնել գողին. գտանք և լաւ խրատ ուտելուց յետոյ սրիկան անյայտացաւ։

Այսպիսի դէպքեր շատ են լինում, բայց երկաթուղու պաշտօնեաները անտարբեր են վերաբերվում սրիկաների արշաւանքներին և ճանապարհորդները տուժում են։ Ցանկալի էր, որ լուրջ հսկողութիւն նշանակվէր, որի համար հրաւիրում ենք երկաթուղու վարչութեան ուշադրութիւնը։

9 ճանապարհորդներ

—

Թիֆլիս, 15 յունվարի

Ես Գանձակի քաղաքային դպրոցի 6 րդ դասարանումն էի, երբ սկսվեց հայ-Թուրքական կոտորածը։ Այդ ժամանակ բոլոր ուսումնարաններն արձակեցին, որոնց Թւում և մերը։ Դրա շնորհիւ ստիպված էի Թողնել հայրենիքըս և գնալ մի որևէ օտար քաղաք ուսումս շարունակելու։ Ի հարկէ յարմարագոյնն էր ինձ համար Թիֆլիսը, ուր, հէնց առաջին դասարանում եղած ժամանակս, փափագում էի գնալ սովորել Ներսիսեան դպրոցում, որը մեր աչքում համալսարանի նշանակութիւն ունէր։ Վերջինիս խոչընդոտ էր հանդիսանում նիւթական սուղ դրութիւնս և այդ էլ աժօթից մօտ բարեկամս ապաստանելով իր մօտ, և միակ կարիքս էր ինչպէս էլ որ լինի մտնել Ներսիսեան դպրոցը, նպատակիս հասնելու համար։ Դիմեցի դպրոց, ասացին՝ պատրաստվեցէք, սեպտեմբերին կը քննենք և եթէ աջող քննութիւն կը տաք, կընդունվէք։ Մնում էր ինձ պատրաստվել համաձայն կանօնադրութեան դպրոցի մանկավարժների՝ հասակիս համապատասխան 3 րդ դասարանի համար։ Ի՞նչ անեմ, ում դիմեմ. վերջապէս այդ էլ մի կերպ աջողեցրի. ընկերոջս միջնորդութեամբ գտնվեց մի բարեխիղճ ուսուցիչ, որը մի քանի ամսում այնպէս պատրաստեց ինձ, որ ես լի ու լի յոյս ունէի մտնելու սեպտեմբերին յիշեալ դպրոցը։

Բայց ահա նոր խոչընդոտ—«տեղ չը կայ, հասակդ համապատասխան չէ 3 րդ դասարանին»։ Դեռ այդ ցաւը բաւական չէ ինձ յուսահատեցնելու համար, խօսում եմ մի որևէ ուսուցչի կամ հոգաբարձուի հետ, միակ պատասխան են տալիս՝ «տեղ չը կայ, հասակդ համապատասխան չէ դասարանին»։ Վերջապէս ասացին որ պատրաստվիմ յունվարին քննվելու 4 դի համար։ Ընկերներս և ուսուցիչս յոյս տուին ինձ, և վերջինս խոստացաւ պատրաստել ինձ 4 դի համար։ Ինչ արած, անցածը չը կորցնելու համար ստիպված էի ընդունել ճակատագրիս վճիռը և շարունակեցի պատրաստվել։ Ի՞նչ էք կարծում, այժմ էլ հասակն էր մեղաւոր. ոչ, այժմ ուրիշ պատճառ բերին. «դպրոցի շէնքը նեղուածք է և աշակերտները բազմաթիւ են, յունվարին ընդունելութիւն չը կայ»։ Երեք ցուրտ էր զօռ արել, շէնքը նեղացրել։ Կ ըծեմ հասակիս անյարմարութիւնը և դպրոցի նեղուածքութիւնը սեպտեմբերին էլ աչքի առաջ ունէին, երբ ինձ խորհուրդ էին տալիս յունվարի համար պատրաստվել։ Հիմա մնացել եմ մոլորված, փողոցներ չափելիս։ Ինչու չէին ուսման տարվայ սկզբից յայտնում, որպէսզի չը պատրաստվէի ես և ինձ պէս մի քանիսը։ Եթէ այս ժամանակամիջոցում պատրաստվէի մի որևիցէ պետական դպրոցի համար, ես կարծում եմ որ ընդունված կը լինէի և պարապմունքներս կանոնաւոր կերպով կը շարունակվէր։

Ահա այդպէս. այդ պ. պ. մանկավարժները իրանց քմահաճոյութիւններով ջախջախեցին այն վառվռուն յոյսերը, որոնց ես տածում էի իրականացնել կարծած համալսարանը աւարտելուց յետոյ։

Վաղարշակ Տէր-Աբրահամեան (գանձակեցի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 15-ին մահափորձ է կատարվել բժ. Ն. Ա. Խուդադովի կեանքի դէմ, հետևեալ հանգամանքներում։ Նոյն օրը, ցերեկվայ ժամը 12-ի մօտերը, երբ բժիշկը մօտեցել է Անդրկովկասի երկաթուղիների հիւանդանոցին, նրան մօտեցել է առաւօտեան բժշկի ծառայողներից Ն.-շվիլին մի նամակ ձեռքին։ Բժ. Խուդադովը կանգ է առնում նամակը կարդալու համար։ Այդ պահուն ետևի կողմից լսվում է ատրճանակի կրակոց և բժ. Խուդադովը, վիրաւորվելով մէջքից, աղաղակելով նետվում է տեղում և ապա դժուարութեամբ գնում է հիւանդանոց, ուր նրան բժշկական օգնութիւն են հասցնում։ Կրակողը անմիջապէս փախուստ է դիմում, իսկ վախեցած և շփոթված Ն-շվիլին սկսում է աղաղակ բարձրացնել։ Այդ ժամանակ երկրորդ չարագործը մի քանի անգամ կրակ է պարպում Ն-շվիլու վրա, սակայն անհետևանք։ Ն-շվիլու խօսքերի համաձայն մահափորձողները հագած են ուսանողական չէրքէզկաներ և սպիտակ մորթէ գդակներ։

—

Մի խումբ անձանց ցանկութեամբ, որոնք Էջմիածնում կատարված անցքերի քննութեան նախաձեռնութիւնն իրանց վրա էին առել, պ. Լէօն զեկուցեց այն քննութիւնների մասին, որ Ղարսի հայ հասարակութեան յանձնարարութեամբ կատարել էր նա Մ. Աբեղեանի և Յովսէփեանի հետ միասին։ Այդ զեկուցումը լսելու համար հրաւիրված էին տեղական հայ մամուլի օրգանների և հաստատութիւնների ներկայացուցիչները։ Ժողովը լսելով զեկուցումը եկաւ այն եզրակացութեան, որ Պարգևն եպիսկոպոսի անձի վրա կատարված անարգանքը նախ և առաջ հետևանք է այն աննորմալ դրութեան, որի մէջ գտնվում է ներկայումս Էջմիածինը, որտեղ զանազան կուսակցութիւններ ու խմբակներ մաքառում են իրար հետ իշխանութիւն ձեռք բերելու համար և որ Էջմիածնի իրերի այդ դրութեանը կարող է վերջ տալ միայն հայկական կեանքի զանազան հարցերը լուծելու համար հրաւիրված ներկայացուցչութիւնը։ Քննութիւնը ի միջի այլոց երևան է հանել, որ ցոյցը կազմակերպել են Երևանից եկած երկու ինչ որ դաշնակցականներ։

—

Կովկասի Փոխարքան մօտ օրերս պէտք է բաց անի Թիֆլիսում պօլիտեխնիկում հիմնելու խնդրով զբաղվող գլխաւոր անդամների Թիւը նորերով։ Ներկայումս գլխաւոր կօմիտէտը բաղկանում է հետևեալ անձերից. կօմիտէտի նախագահ՝ Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր գ. խ. Ի. Վ. Միցկեվիչ. կօմիտէտի անդամներն են՝ Կովկասի զինւորական վիճակի շտաբի կառավարիչ գեներալ-լէյտենանտ Ն. Պ. Շատիլով, Կովկասի զինւորական վիճակի ինժեներների կառավարիչ գեն. լէյտ. Եանուշկովսկին, Փոխ. դիւանատան կից գտնվող տեխնիքական մասնաժողովի նախագահ գ. խ. Ս. Ֆ. Նովոմէյսկին (գլխաւոր կօմիտէտին կից եղող տեխնիքական մասնաժողովի նախագահ), հողային բարեկարգութեան և երկրագործութեան Կովկասի լիազոր գ. խ. Ն. Ս. Մեղ-

վէրիեվ, գ. խ. Լ. Լ. Մարկով, Կովկասի Փոխարքայի դիւանապետ, Բարձրագոյն պալատի հօֆմէյստէրի պաշտօն ունեցող իսկական գ. խ. Ն. Լ. Պետէրսոն, Փոխարքայի խորհրդի անդամ ի. գ. խ. Ն. Ֆ. Զուսկօվսկի, կովկասեան լեռնային վարչութեան պետ ի. գ. խ. Կ. Ֆ. Րուգևիչ, Կովկասի Ջրերի տեսուչ ի. գ. խ. Ն. Ա. Պետրով, Կովկասի կրթական վիճակի տեսուչը, Թիֆլիսի նահանգապետը, Կովկասի շրջանային զինուորա-բժշկական վարչութեան զինուորա-բժշկական լաբօրատօրիայի կառավարիչ ի. գ. խ. Մ. Վ. Լունկէվիչ, Փոխարքայի մօտ գտնվող IV-րդ կարգի, առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ հօֆմէյստէր Ասէլդէր-բէկ Կաղանալիպով, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան կրթական մասի շրջանային տեսուչ Մ. Օ. Ֆիշէր, Փոխարքայի ժողովրդա-զինուորական վարչութեան դիւանատան փոխ-վերատեսուչ Վ. Վ. Ստրատօնով, (գործավարութիւնը կատարող գլխաւոր կօմիտէտի անդամ), Թիֆլիսի ֆիզիքական դիտանոցի վերատեսուչ Ս. Վ. Գլասէկ, պետական արքունական պալատի կառավարիչ Վ. Ֆ. Օստրովսկի, Բարձրագոյն պալատի կամէր-իւնկէր, ազնուականների պարագլուխ Գ. Ա. Բագրատիօն-Դաւիդով և Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Վ. Ն. Ջերքէզով (գլխաւոր կօմիտէտի ֆինանսական մասնաժողովի նախագահ), պալատական կամերհէր իշխ. Ն. Վ. Արղութեան-Երկայնաբազուկ, Թիֆլիսի գաւառական ազնուականութեան պարագլուխ իշխ. Գ. Ի. Թումանով, պալատական կամէր իւնկէր իշխ. Գ. Ա. Գրուզինսկի, Թիֆլիսի առևտրի և մանուֆակտուրայի նախագահ կօմ. խորհ. Գ. Գ. Աղէլխանով, իշխ. Գ. Մ. Թումանով, Իսրաֆիլ-բէկ Հաջիէվ, ինժէնէր-տեխնոլօգ Ա. Գ. Բախմէտով, Ալի-Մարդան-բէկ Թօփչիբաշէվ, կօմ. խորհր. Ա. Ի. Մանթաշէվ, ինժ. մեխանիկ Ա. Ս. Բաքով, լեռնային ինժենէր Ի. Մ. Ալիխանով, երդուեալ-հաւատարմատարներ՝ Ռ. Ի. Ցովհաննիսեան, Լ. Եւանգուլեան, Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամներ՝ Ն. Գ. Կօկչաէվ, Ա. Ֆ. Փրիդօնով, Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան վարչութեան նախագահ Գ. Ս. Ղամբարեան, Դ. Զ. Սարաջէվ, Թիֆլիսի նօտարիուս Ի. Ի. Ցինամզգվարով, գնդապետ Շախրուխ Միրզա պրինց Պէրսիդսկի, փոխ-գնդապետ Իբրահիմ-բէկ Վէքիլով և Միրզա-Շէրիֆ Միրզոյէվ։

—

Լօնդօնից «Русск. Сл.» լրագրին հեռագրում են, որ «Times» լրագրի մէջ տպագրված է Պետական Դումայի նախկին անդամ Ալադինի յօդուածը, որ նուիրված է վերջին ժամանակներս Ռուսաստանում կատարված անցքերին և պարզաբանում է երկրի քաղաքական վիճակը։ Հեղինակը նկատում է, որ երկրի մէջ իրար դէմ կանգնած երկու հակառակ բանակներ՝ կառավարութիւնը և ժողովուրդը, կռիւ են մղում, և կառավարութիւնը ձգտում է սեղմել ընտրողների իրաւունքները երկրորդ Պետական Դումայի մէջ։ Ալադինի կարծիքով ընտրութիւնների ժամանակ գերակշռութիւնը կը լինի գիւղացիների կողմը, որոնք լաւ են հասկանում ռեֆօրմների անհրաժեշտութիւնը։ Գիւղացիների յարաբերութիւնը դէպի երկրորդ Դուման մնացել է նոյնը, ինչ որ եղել է առաջին ընտրութիւնների ժամանակ։

(«Товарищъ»)

—

Փօստ հեռագրական վարչութեան գլխաւոր կառավարիչ Սէվաստիանօվը շրջաբերական հրաման է ուղարկել հեռագրական կառավարիչներին, որով առաջարկում է նրանց խիստ հսկողութիւն նշանակել, որպէսզի փօստատներում չընդունվեն այնպիսի ծրարներ, որոնցով ուղարկվում են անլեգալ կուսակցութիւնների կոչերն ու ընտրողական թերթիկները։

(«Р. В.»)

—

Ցունվարի 10-ին Պետերբուրգում լոյս չեն տեսել «Рѣчь», «Товарищъ» և «Страна» լրագիրները, որովհետև յունվարի 9-ին բանւորները չեն աշխատել։

(«Новь»)

—

Արդարադատութեան մինիստրութիւնը նոր տարվանից մերժել է վկայականներ տալ գործեր պաշտպանելու համար երդուեալ հաւատարմատարների հրէայ օգնականներին։

(«Р. В.»)

—

«Бирж. Вѣд.» լրագրին Լօձից հեռագրում են, որ լուկաուտի պատճառով գործարանների վնասը գնալով աւելի է աճում։ Մինչև այժմ կրած վնասը հասնում 4 միլիօն րուբլու։ Ցունվարի 7-ին բանւորական ժողով է գումարվել, որտեղ վճռել են չը զիջել։ Չեն զիջում և գործարանատէրերը. այդպիսով ճգնաժամը թուլանալու փոխարէն, սաստկանում է և ահագին վնասներ պատճառում։

(«Р. В»)

—

Մոսկվայի դատաստանական պալատում յունվարի 9-ին և 10 քննվել է «Կովկասեան ռազմիկ խմբի» գործը, որի մէջ մեղադրվում էին եօթը հոգի, այն է 1905 թ. դեկտեմբեր ամսում Մոսկվայում, զինված ապստամբութեան օրերում. մասնակցութիւն են ցոյց տուել խռովարարների հետ՝ իրանց նպատակ ունենալով բռնի միջոցներով տապալելու հիմնական օրէնքներով սահմանված պետական կարգերը։ Դատաստանական պալատը բոլոր վկաներին մանրամասն հարց ու փորձ ենթարկելով և մեղադրվածների դէմ ծանր յանցանքներ չը նկատելով՝ կայացրել է հետևեալ վճիռը. Իվանօվին, Կուլիկօվին և Քանանեանին ենթարկել բանտարկութեան 1 տարով, իսկ Ցինցաձէին և Կանդէլակուն—8 ամսով, հաշուելով նախնական բանտարկութեան օրից։ Բոլոր մեղադրվածները պալատի որոշմամբ ազատ են թողնված։ Մեղադրվածներին պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ՝ Մալիանտովիչ, Տէսլէնկօ, Կանդէլակի և Օրգինսկի։

—

Վերջին ժամանակներս Ցարսկօյէ Սելօյի մեծ պալատում պահակների թիւը աւելի է շատացված, քան թէ Տրեպօվի ժամանակն էր։ Հրաւիրվածներին թոյլ էին տալիս ներս մտնելու պալատ մեծ նախազգուշութեամբ։ Պահականեր նշանակված են գվարդէյսկի բատալիօնից։ Ժանդարմներեանների թիւը ընդհակառակը պակասեցված է։ Պալատական կօմենդանտ գեներալ Դեդիւլինը հնարաւոր է համարել Ցարսկօյէ-Սելօյի ժանդարմերիական փոխ-գնդապետի պաշտօնը վերացնել։

(«Пет. Лист.»)

—

Ոստիկանամասերի ծառայողներին հրամայված է անմիջապէս հարցաքննել բոլոր կառապաններին, թէ արդեօք չէ՞ մոռացված որևէ մէկի մօտ թղթերով լի թղթապանակը, որ մոռացմամբ թողել է կառքում սենատոր Դօբրօվօլսկին, որոնց մէջ գտնվում են սենատի գործերից չափազանց մեծ արժէք ունեցող գործեր։ Մինչև այժմ ոչ մի արդիւնք չը կայ։

(«Вѣкъ»)

—

Խուզարկու ոստիկանութեանը հրամայված է այսուհետև մասնաւոր բնակարաններում խուզարկութիւնները կատարել ցերեկով միայն, իսկ արտակարգ դէպքերում միայն գիշերը։ Խուզարկութիւնից առաջ ուժեղ պահակներով պէտք է շրջապատել այն տունը, որտեղ պէտք է խուզարկութիւնը կատարվի, ապա ոստիկաններից մեծ թւով պէտք է ուղարկել նախազգուշացնելու զինված դիմադրութիւնը, միևնոյն ժամանակ խուզարկուները պէտք է զրահ հագած լինեն։ («Ст.»)

—

Պետերբուրգի քաղաքապետ ֆօն-դեր-Լաունիցի այրին ստացել է միանուագ նպաստ 5,000 րուբլի, բացի դրանից տարեկան 6,000 րուբլի էլ կենսաթոշակ է նշանակված ամբողջ ընտանիքի համար։ («Ст.»)

—

Ուլէաբօրգի սառրին ոստիկանների գործադուլը վերջացել է յունվարի 3-ին։ Ոստիկանները ի միջի այլոց առաջարկել էին հետևեալ պայմանները. 1) ոստիկանապետի կողմից քաղաքավարի վերաբերմունք, 2) փոխել այն կարգադրութիւնը, որով արգելվում է փողոցում կանգնած ժամանակ խօսակցել ընկերների և հասարակութեան հետ, 3) հեռացնել ոստիկանապետին և բարձր ծառայողներից մի քանիսին։ Նահանգապետը մերժել է հեռացնել ոստիկանապետին, իսկ միւսների մասին խոստացել է քննութիւն կատարել և հեռացնել իսկական յանցաւորներին։ («Страна»)

—

Ստօկհօլմ քաղաքում կալանաւորված ռուսահպատակ Չերնիակինին, որ մեղադրվում է Պետերբուրգի Ֆօնարնայա փողոցում կատարված 368 հազար րուբլու կողոպուտի համար, ռուսաց արդարադատութեան մինիստրը խնդրել էր յանձնել ռուս կառավարութեանը։ Այժմ շվեդական կառավարութիւնը պատասխանել է այդ խնդիրքին, որ ինքը կը համաձայնվէ մեղ դրվողին վերադարձնելու մի պայմանով միայն, այն է, որ Չերնիակինը դատվի սովորական դատարանով և ոչ թէ զինուորական-դաշտային։ («Товарищъ»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ դեկտ. 25-ին

Մի քանի օր էլ և տարին կը վերջանայ, ուստի աւելորդ չեմ համարում կանգ առնել մեր քաղաքում, մանաւանդ հայկական կեանքի՝ այսպէս թէ այնպէս հասարակական բնոյթ ունեցող երևոյթների վրայ։ Նախ՝ մի քանի խօսք տեղի ունեցած ներկայացումների մասին։

Այս դպրոցական կիսամեակի ընթացքում Լիլաւայի Հայկազեան դպրոցի ուսուցչական խումբը դպրոցի թատրոնական սրահում ներկայացրեց Շիրվանզադէի «Պատուի համար» դրաման նոյն դպրոցի օգտին. «Թագի համար» Կօպպէի պատմական դրաման։ Իսկ Ղալայի «Արամեան» դպրոցի թատերասրահում նոյն դպրոցի ուսուցչական խումբը տեղիս սիրողների մասնակցութեամբ այս կիսամեակում՝ նոյեմբերի մէջ, ներկայացրեց «Կրեչինսկու հարսանիքը» նոյն դպրոցի օգտին. ապա նոյն խումբը սիրողների մասնակցութեամբ խաղաց «Ոճրագործի ընտանիքը» դրաման Հայուհեաց ընկերութեան օգտին։ Վերջին ներկայացումը Ղալայի թատերասրահում տեղի ունեցաւ անցեալ օր, 23-ին, շաբաթ. սիրողների խումբը խաղաց առաջին անգամ Սարդուի «Ոգեհարցութիւն» (Սպիրիտիզմ) դրաման, ապա «Բարբուլիէ» Մօլիերի կատակերգութիւնը և «Երկու քաղցածներ» վօդէվիլը։ Ներկայացումը կազմակերպել էր տեղիս Հնչակեան մասնաճիւղը և ամբողջ արդիւնքը յատկացվելու է նոյն մասնաճիւղի օգտին։ Սեպտեմբերից ըսկսած Թաւրիզի հայ հասարակութիւնը տեսաւ, ուրեմն, 4 ներկայացում, որոնցից 3-ը Ղալայի թատերասրահում և մէկը Լիլաւայի թատերասրահում։ Ահա մեր թատրօնական կեանքը։

Այստեղի նորութիւններից մէկն էլ սինեմատօգրաֆն է, որ սարքել է մի ռուս՝ Անօխին անունով, մեքենագործ։ Սինեմատօգրաֆը, որպէս նորութիւն Թաւրիզում գրաւում է բաւական մեծ հասարակութիւն, չը նայած, որ տեղերը բաւական թանգ են։ Պէտք է ասած, որ պատկերները աչող չեն և լաւ, պարզ չեն երևում։ Թէ Ղալայի և թէ Լիլաւայի հայ ուսուցիչները տարան իրանց աշակերտներին և աշակերտուհիներին սինեմատօգրաֆը ցոյց տալու, որոնցից շատերը իրանց կեանքում առաջին անգամ էին տեսնում դարիս այս հրաշալի գիւտը։ Որովհետև Թաւրիզում, որպէս պարսկական քաղաքում, շատ քիչ են կրթական միջոցներ հայ աշակերտութեան համար, սինեմատօգրաֆը կարող է ծառայել որպէս գեղեցիկ կրթական միջոց։ Տեղիս Թուրք դպրոցների աշակերտներն էլ այցելել են սինեմատօգրաֆը իրանց մօլլաների թոյլտւութեամբ։

Դաբբին

—

Արդաբիլ, 24 դեկտեմբերի

Ահա 3 շաբաթ է ինչ վերջացաւ այստեղի մեծ գործադուլը, որ տևեց 2 շաբաթ։ Հետևանքը եղաւ այն, որ դարուգը (նահանգապետ) փախաւ քաղաքից և քաղաքը մատնվեց անիշխանութեան։ Կողոպուտ, թալան, մարդասպանութիւն. այս բոլորը սովորական բաներ են դառել մեզանում չը կայ կարգ, կանոն։

Անմիջապէս քաղաքի այս դրութիւնը ազդեց շրջակայ գիւղերի վրայ և մի քանի գիւղերում գիւղացիք դուրս են արել գիւղի խաներին, իրանց յայտարարելով գիւղի տէր։ Աւազակները նորից գլուխ են բարձրացրել և առանց խոչընդոտների հանդիպելու աջ ու ձախ կամայականօրէն անում են այն, ինչ ցանկանում են։ Թաւրիզից եկող անխտիր բոլոր ճանապարհորդներին մինչև վերջին շապիկը տկլորեցնում են և ճանապարհ դնում։ Ապահով էր մի քիչ Արդաբիլ-Աստարայի ճանապարհը, սակայն այժմ այն էլ է վտանգված, երևան են եկել աւազակային խմբեր, որոնք, ինչպէս ասում են ռուսական սահմանից են, անցել և անխտիր մինչև վերջին հասարակ չարվադարը կողոպտում են։ Ամսիս 22-ին Աստարայից Արդաբիլ էր գալիս տեղացի Տիգրան Տէր-Գաբրիէլեանցը, որ գնացել էր Բաքու սեփական գործով և բաւականին ապրանք էր բերում հետը (մինչև 2500 ր. արժողութեամբ). աւազակները բռնում են նրան, փառաւոր կերպով կողոպտելուց յետոյ, նրանցից մէկը ուզում է խենջալի մի հարուածով վերջ դնել նրա կեանքին, սակայն, «բարեխիղճ» աւազակներից մէկը արգելք է հանդիսանում և տալով նրան մի փոքրիկ ղուրան, երդվեցնում են ղուրանով, որ կատարված դէպքի մասին ոչ մի տեղ չը գանգատվի։ Սա երկրորդ դէպքն է Պարսկաստանում հայ կողոպտելուն։

Ամսիս 21-ին, երեկոյեան ժամը 6-ին, երբ մենք հանգիստ նստած էինք սենեակումը յանկարծ լսվեց մի ուժեղ պայթիւն, որ բոլորիս, ինչպէս ցնցեց ամբողջ քաղաքը. այդ ժամին և այդպիսի մի պայթիւն Արդաբիլի համար խիստ տարօրինակ էր, ուստի բոլորը հետաքրքրվում էին իմանալ դէպքի ճշտութիւնը։ Հետևեալ օրը պարզվեց, որ Բագուից եկած տէռօրիստներ (իբրև թէ) են եղել, որոնք առաջին անգամ ռումբ ներմուծելով Պարսկաստան և առաջին մահափորձը ռումբով կատարում են։ Արդաբիլում թուրքերի մեծամասնութիւնը խիստ յուզված էր հայերի դէմ, կարծելով որ հայերն են փորձում սարսափ ազդել թուրքերի վրայ։ Սակայն, բարեբախտաբար մօտիկուց անցնող մօլլաններին յաջողվում է հանգստացնել գրգռված տրամադրութիւնը և համոզել որ Բագուից եկած «գեաղաններն» գործ էր։ Այդ առիթով ահա 3 օր է թուրքերը շարունակ ժողովներ են ունենում, գանելու այդ «գեաղաններին»։

Գ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 յունվարի

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ, 14 յունվարի։ Զինուորական դրութիւնը վերցրած է և նրա տեղ 6 ամսով յայտարարած է արտակարգ պահպանութիւն։

ԼՕՁ, 14 յունվարի։ Համարեա 7 օր դադարումից յետոյ վերստին սկսվեցին կուսակցական հողի վրա կատարվող սպանութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Գերմանական կայսրի ծննդեան տօնի առիթով Ցարսկօյէ Սելօում, Նորին Կայսերական Մեծութիւնների մօտ կայացաւ ճաշկերոյթ, որին հրաւիրված էին գերմանական դեսպանը և գերմանական դեսպանատան պաշտօնեաները։ Թագաւոր կայսրը խմեց գերմանական կայսրի կենացը։ Նորին Մեծութիւնները խօսակցեցին դեսպանի հետ, նրա կնոջ և դեսպանատան պաշտօնեաների հետ։

ՊԱՐԻԶ, 15 յունվարի։ Գերմանական դեսպան իշխան Րադօլինը, ի պատիւ գերմանական կայսրի ծննդեան, Պարիզի գերմանական գաղութի կազմած հացկերոյթին ճառ արտասանեց, որով մատնանշեց, որ ներկայումս ոչ մի բան չէ սպառնում Գերմանիայի և Ֆրանսիայի սրտագին յարաբերութիւններին։ Վերջում նա ասաց, որ գերմանական ընտրութիւնների հետևանքը հանդիսանում է մի լաւագոյն նուէր, որպիսին գերմանական կայսրը կարող էր ստանալ իր ժողովրդից իր ծննդեան օրվայ առիթով։

ՕՍՏԵՐՁՈՒՆԴ, 15 յունվարի (Շվէցիա)։ Երէկ, առաւօտեան ժամը 6-ին, Եմտլանդ նահանգի արեմտեան մասում զգացվել են ստորերկրեայ ուժեղ հարուածներ, որ տևել են ամբողջ 45 վայրկեան։

ԿԱԼԿՈՒՏԱ, 15 յունվարի։ Քաւլանից բուխարական էմիրը։

16 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Ռուսաց զօրքերը Մանջուրիայից շտապով դուրս հանելու մասին չինական կայսրին հաղորդվեց Թագաւոր Կայսրի հեռագրով, որի մէջ ցանկութիւն է յայտնված, որ ապագայում աւելի ու ամրապնդվեն Ռուսաստանի և Չինաստանի բարեկամական յարաբերութիւնները, և յոյս, որ Մանջուրիայում ապրող ռուսահպատակների իրաւունքները լիովին կպահպանվեն։ Այդ հեռագրին իբրև պատասխան Բօղդիխանից Բարձրագոյն անունով ստացվեց մի հեռագիր, որի մէջ ուրախութիւն է յայտնվում կայսերական կառավարութեան կողմից այդօրինակ վճիռ կայացնելու առիթով, որ վկայում է այն բարեկամական յարաբերութիւնները, որոնցով կայուն և հաստատ հողի վրա է հաստատվում երկու մեծ պետութիւնների փոխադարձ բարեկամութիւնը. Ընդսմին յիշեալ հեռագրով հրամայվում է Մանջուրական իշխանութիւններին՝ հարկաւոր պահպանութիւնը ցոյց տալ ռուսահպատակներին։

ԻՐԿՈՒՏՍԿ, 15 յունվարի։ Ցերեկվայ ժամը 2-ից այրվում են ինտենդանտական վարչութեան զօրանոցները և արհեստանոցները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Ներքին գործերի մինիստրութիւնը Հիմնական Օրէնքների 87-րդ յօդուածի համաձայն մինիստրների խորհրդին է ներկայացրել մի օրինագիծ, որով վերացվելու են ստարօօբրեադցիների և աղանդաւորների քաղաքացիական և օրինական ոտնահարումները, որոնց համաձայն նրանց ամուսնութիւնը չէր գրվում մետրիքական գրքերի մէջ։

Գեներալ-լէյտենանտ Պրոտօպօպօվը նշանակվում է բերդային գլխաւոր կօմիտէտի նախագահ։

ԿՈՍՏՐՈՄԱ, 15 յունվարի։ Սահմանադիր-դեմոկրատների կազմած ժողովում հոկտեմբերական Բուչինը խիստ կերպով ջախջախեց սահմանադիր դեմոկրատների՝ նախկին Պետական Դումայում ցոյց տուած գործողութիւնը, տակտիկան և ծրագիրը. Նրա ճառը մեծ հաւանութիւն գտաւ հասարակութեան կողմից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 յունվարի։ Առևտրի մինիստրը Սենատին մի զեկուցագիր է ներկայացրել Բագւում նաւթային կապալներ հաստատելու մասին։

ՕԴԵՍՍԱ, 15 յունվարի։ Սօցիալ-դեմօկրատների գաղտնի տան մէջ ոստիկանութիւնը գտել է անցաթղթի բլանկներ և զանազան քաղաքների մէշչանական ուպրավաների կնիքներ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզատեղ. հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներարգային։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։

Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

Գ. Յ. Գուրդինօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—6½—7½ ժ.։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,

որը աւարտել է Թիֆլիսի քաղաքային դպրոցը և հաշուապահութիւն, ցանկանում է ճաշի և սենեակի փոխարէն դասեր ունենալ հայերէն և ռուսերէն լեզուներից։ Հասցէն՝ Большая Ванкская № 1 отъ 9—12 утра и 3—6 вечера, հարցնել Մարգարեանին։

(չ. ու. կ.) 1—3

Մի հայուհի ցանկանում է ունենալ կօնտօրշչիկի, գործակատարուհու, կասսիրշայի պաշտօն մագազիններում կամ կօնդիտերսկում, կամ ընտանիքում բօննայի պաշտօն վարել։ Հասցէն՝ Բեբուտովսկի փողոց, № 5, Աղախանեան։ 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելեամինօվսկայա փողոց № 8.

(Ե. Հ. Չ.) 14—100

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"

Գրավաճառանոցի հրատարակութիւն

Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած

начальная русская христоматія

для армянъ

դասաւանդութեան բացատրութիւններով

1. գրքոյկ

Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածուիլ նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում։ 8—10

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Չորեքշաբթի, յունվարի 17-ին

նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Սկիզբն է երեկոյեան 10 ժամին. Դիմակներով անհրաժեշտ է լինել մինչև վերջը։ Զգեստների ձևը. զինուորականները սովորական զգեստով, քաղաքացիները սև սերթուկով, տեղացիները ազգային հագուստով։ Տոմսակները գտնվում են ժողովարանի գրասենեակում։ 1—1

Զաք. Գրիգորեանցի

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

Լոյս տեսաւ

1) «Բնագիտութիւն»—համառօտ դասընթաց բնական գիտութիւնների՝ կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և բուսաբանութիւն. ա. տարվայ դասընթաց. աշխատասիրեց Զաք. Գրիգորեանը, 2-րդ տպագրութիւն 1906 թ., գինն է 50 կոպ.։

2) Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի նոյն Զաք. Գրիգորեանցի կազմած «Մարդակազմութիւն» դասագրքի 2-րդ, աւելի ընդարձակած և բազմաթիւ պատկերներով հրատարակութիւնը։

(չ. ու. չ.) 1—3

„Գուտտենբերգ"

գրավաճառանոցում վաճառվում են

1) Լեոն Սարգսեանի, «Ժողովրդի կրթութիւնը մեզանում», 1892 թ., գինն է 20 կոպ.։

2) Լեոն Սարգսեանի, «Հին ցաւ» (հրապարակախօսական խոհեր). 1900 թ., գինն է 30 կոպէկ։

3) Լեոն Սարգսեանի, «Մի քանի օր Արցախում և Սիւնիքում», 1904 թ., գինն է 20 կոպէկ։

4) Լեոն Սարգսեանի և Կ. Կուսիկեանի, «Մայրենի խօսք» ընթերց. ձեռնարկ, հայերէն-ռուսերէն բառգրքով, գինն է 75 կոպէկ։

5) Սարգիս Սարգսեանի, «Լեզուաբանական հետազօտութիւն Ագուլեցոց բարբառի մասին», 2 րուբլի։

6) Բժ. Գարեգին Սարգսեանի, «Վնասակար և օգտակար միկրօբներ», գինն է 20 կ.։

7) Ասանձարի, «Վշտի ծիծաղը», գինն է 70 կ.։

8) Ս. Դանիէլբէգեան, «Կանանց հարցը», գինն է 70 կոպ.։

9) Ջ. Մօրիեր, «Հաջի Բաբայի արկածները», 2 հատոր, գինն է 3 ր. 50 կոպ.։

—

Նոյն տեղ ընդունվում է «Մուրճ» ամսագրի 1907 թ. բաժանորդագրութիւնը։ 1—10

ՈՐՈՆՈՒՄ ԵՆ

Համապատասխան պաշտօններ

Մի երիտասարդ փորձառու գործակատար և երկու նորեկ պատանիներ, խանութպաններում, պահեստատներում, գրասենեակներում, և այլ հաստատութիւններում։ Ամենքն էլ գրագէտներ են, թէ հայերէնում և թէ ռուսերէնում։

Հասցէն «Մշակի» խմբագրատուն. Լ. Գ. 3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

երկրորդ տպագրութեամբ

Թուաբանական խնդիրներ և օրինակներ

Մոսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների

Փոխադրեց և յարմարեցրեց հայ դպրոցների ծրագրին

ԱՐՇԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԵԱՆ

Ա. պրակ. Առաջին և երկրորդ տարի 30 կ.

Բ. պրակ. Երրորդ տարի . . 30 կ.

Գ. պրակ. Չորրորդ տարի (1 դասարան) 30 կ.

Մամուլի տակն է շուտով լոյս կը տեսնի Դ. պրակ Կոտորակներ—ըստ Շապշնիկովի և Վալցովի։

Դիմել՝ «Գուտտենբերգ» գրախանութին կամ ինձ՝ Тифлисъ, Абасъ-Абадская площадь домъ Теймуразова-Спарапетяну.

Գումարով գնողներին զեղջ։ 6—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. Տէրմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգէնովի № 7. պօդեզ նօտար Մղերօվի։

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8, կանանց համար 12—1 ժամը։

Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկևիչի փողոցների, № 33/15։

(ա. օ.) 89—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 16.

(ա. կ. չ.) 10—20

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Գ. Զախարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶԼԱՑԻՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.

Տելեֆօն № 1087

Սօլօլակ, Լերմոնտովսկայա փող., 16.

(ա. օ.) 85—150

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36 50—100

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ., տուն. № 24/4.)

Զբաղմունքների սկիզբն է նոր ընդունվածների հետ յունվարի 10-ից։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 4—7 ժամը։ Կանոնները և ծրագիրը տրվում են և ուղարկվում են ձրիաբար։

ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Մանրամասն տեղեկութիւնների համար դիմել կուրսերի հիմնադրին, առևտրական գիտութիւնների կանդիդ. Տ. Փիլոյեանին։ (օր. մ.) 8—10

Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ".

Օգտակար ընծայ առաջիկայ տօներին

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ

ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ

ԵՒ

ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ

ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ

Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։

ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ

Պատկերազարդ կատալօգները և պիեսների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։

TRADE MARK GRAMMOPHON

ԳՈՐԾ ԴՐՈՇՄ

„ԳՐԱՄՄՕՖՕՆ"

Ակցիօներական ընկերութեան

Թիֆլիսի բաժանմունք

Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 9.

Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія".

(Հ. Հ.) 15—25

Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ".

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5